



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՄՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Հ Ա Ղ Ո Ր Դ ՈՒ Մ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՄՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Մեր մասին - - - - -	3
2. Հանրային հեռուստառադիոընկերության 2009 թվականի գործունեության նպատակները - - -	5
3. Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ - - - - -	8
4. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ - - - - -	10
5. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ - - - - -	28
6. «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ - - - - -	37
7. «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ - - - - -	40

1. Մեր մասին

Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը ստեղծվել է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի համաձայն Հայաստանի Հանրապետության նախագահի 19.01.2001թ. ՆՀ-798 հրամանագրով, իսկ Հանրային հեռուստառադիոընկերություն պետական հիմնարկը գրանցվել է 2001 թվականի հունիսի 7-ին (N Բ005006 պետական ռեգիստրի վկայական): Այն հատուկ կարգավիճակ ունեցող պետական հիմնարկ է, որի իրավական վիճակի առանձնահատկությունները սահմանվում են «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով:

2001 թվականի հուլիսի 30-ին գրանցվել է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (N02Ա051177 պետական ռեգիստրի վկայական), որն իրականացնում է Հանրային հեռուստառադիոընկերության հեռուստատեսային հաղորդումների արտադրության և հեռարձակման գործունեությունը: Հանրային հեռուստաընկերությունը իր գործունեությունը սկսել է իրականացնել Ազգային հեռուստատեսությունից փոխանցված շենք-շինություններում և տեխնիկական միջոցներով: Գործունեության հետագա տարիներին Հանրային հեռուստաընկերությունը տեխնիկական վերազինման միջոցով Ազգային հեռուստատեսությունից փոխանցված տեխնիկական միջոցների մեծ մասը աստիճանաբար փոխարինել է նոր, ժամանակակից հեռուստատեսային տեխնիկայով: Ռեսուրսների սահմանափակության պատճառով վերազինման գործընթացն ամբողջությամբ չի ավարտվել և դեռևս շահագործվում են Ազգային հեռուստատեսությունից փոխանցված որոշ տեխնիկական միջոցներ:

Հանրային հեռուստաընկերությունը իրականացնում է հեռուստահաղորդումների արտադրություն և հեռարձակում երեք հեռուստաալիքներով՝ «Հ1» առաջին ալիք, «Արարատ» մշակութային հեռուստաալիք և «Հ1» միջազգային ալիք (արբանյակային հեռարձակմամբ): «Հ1» առաջին ալիքի հաղորդումները հեռարձակվում են հանրապետության ողջ տարածքում: «Արարատ» մշակութային հեռուստաալիքը հեռարձակվում է Երևանում, Վանաձորում, Չարենցավանում, Սևանում, Գավառում, Եղեգնաձորում, Ջերմուկում, Ծաղկաձորում և Շիրակի մարզում: Մոտ ապագայում նախատեսվում է ընդլայնել հեռուստաալիքի հեռարձակման գոտին ողջ հանրապետությունում: «Հ1» միջազգային ալիքը հեռարձակվում է ԱՊՀ տարածքում, Եվրոպայում, Մերձավոր Արևելքում Հյուսիսային Աֆրիկայում և Հյուսիսային Ամերիկայում: Գործունեության հենց սկզբից Հանրային հեռուստաընկերությունը եղել է հայաստանյան հեռուստատեսության առաջատարը և այսօր էլ պահպանում է իր ուրույն տեղը հայկական հեռուստատեսությունում:

2001 թվականի դեկտեմբերի 28-ին գրանցվել է «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (N 03Ա 052744 պետական ռեգիստրի վկայական), որն իրականացնում է Հանրային հեռուստառադիոընկերության ռադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման գործունեությունը: Հանրային

նադիորենկերությունը իր գործունեությունը սկսել է Ազգային նադիոյից փոխանցված շենք-շինություններում և տեխնիկական միջոցներով: Հետագա գործունեության ընթացքում Հանրային նադիորենկերությունը գրեթե ամբողջությամբ կարողացել է ավարտել տեխնիկական վերազինման գործընթացը, որի շնորհիվ ներկայումս նադիոհաղորդումները հեռարձակվում են ժամանակակից չափանիշներին համապատասխանող տեխնիկական միջոցներով:

2009 թվականին Հանրային նադիորենկերությունը իրականացրել է նադիոհաղորդումների պատրաստում և հեռարձակում «Առաջին ծրագիր», «Ռ-ադիո Երևան» և «Ռ-ադիո Ջագ» ծրագրերով, ինչպես նաև պատրաստվել և հեռարձակվել են հաղորդումներ արտասահմանի համար: Հանրային նադիորենկերության հաղորդումները հեռարձակվել են միջին, կարճ, գերկարճ և FM հաճախականություններով:

Հանրային նադիորենկերությունը հայաստանյան նադիոէթերում ընդգծված առաջատար է և առանձնանում է իր բազմաբովանդակ և հանրության բոլոր շերտերի պահանջմունքների բավարարմանն ուղղված հաղորդաշարերով:

ՀՀ կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 29-ի «Գյումրու «Շիրակ» հեռուստառադիո» փակ բաժնետիրական ընկերության մասին» N 1312 որոշման համաձայն «Գյումրու «Շիրակ» հեռուստառադիո» փակ բաժնետիրական ընկերության՝ պետական սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերի կառավարման լիազորությունը վերապահվել է Հանրային հեռուստառադիորենկերության խորհրդին: Վերջինիս որոշմամբ ընկերությունը վերանվանվել է «Շիրակի հանրային հեռուստառադիո» փակ բաժնետիրական ընկերության, որը հեռուստառադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման գործունեություն է իրականացնում ՀՀ Շիրակի մարզում: Ունենալով սահմանափակ ռեսուրսներ՝ «Շիրակի հանրային հեռուստառադիո» փակ բաժնետիրական ընկերությունը իր հետագա գործունեության ընթացքում որոշակիորեն իրականացրել է տեխնիկական վերազինման աշխատանքներ, սակայն դեռևս տեխնիկական վերազինման ապահովվածության առումով ընկերությունն ունի լուրջ խնդիրներ: Շիրակի հանրային հեռուստառադիոն հեռուստահաղորդումների հեռարձակումն իրականացնում է Շիրակի մարզի տարածքում դեցիմետրային տիրույթի 39-րդ կապուղով և Ամասիայում՝ 41-րդ դեցիմետրային կապուղով, իսկ նադիոհաղորդումների հեռարձակումն իրականացնում է FM տիրույթում: Շիրակի հանրային հեռուստառադիոն միակ մարզային Հանրային հեռուստառադիորենկերությունն է և իր հաղորդումներում հիմնականում անդրադառնում է մարզի առօրյային, խնդիրներին և մարզային նշանակության այլ հարցերի:

ՀՀ կառավարության 2003 թվականի նոյեմբերի 6-ի «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի կառավարման լիազորությունները Հանրային հեռուստառադիորենկերության խորհրդին վերապահելու մասին» N1401-Ն որոշման համաձայն «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության՝ պետական սեփականության իրավունքով պատկանող

բաժնետոմսերի կառավարման լիազորությունները վերապահվել են Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդին: Ընկերության գործունեության հիմնական նպատակը Հանրային հեռուստառադիոընկերության կողմից հեռարձակվող հաղորդումների և հաղորդաշարերի վերաբերյալ հանրության կարծիքի ուսումնասիրությունն է, ինչը հնարավորություն է տալիս հանրությանը մասնակից դարձնել Հանրային հեռուստառադիոընկերության ծրագրերի կազմման գործընթացին:

2006 թվականից Հանրային հեռուստառադիոընկերությունը EBU-ի (Եվրոպական Հեռարձակողների Միություն) լիիրավ անդամ է, ինչը հնարավորություն է տալիս Հանրային հեռուստառադիոընկերությանը ընդլայնել փոխադարձ համագործակցության շրջանակները կազմակերպության անդամ հեռուստարընկերությունների և ռադիոընկերությունների հետ, ինչպես նաև Հայաստանը ներկայացնել այդ կազմակերպության կողմից կազմակերպվող միջազգային միջոցառումներում (Եվրատեսիլ, Մանկական եվրատեսիլ և այլն):

Հանրային հեռուստառադիոընկերության ղեկավար մարմինը Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդն է, որը բաղկացած է հինգ անդամներից, որոնց, իր հաստատած մրցութային կարգի համաձայն, նշանակում է Հայաստանի Հանրապետության Նախագահը: Ներկայումս Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահն է Ալեքսան Հարությունյանը, խորհրդի նախագահի տեղակալ՝ Ստեփան Պողոսյանը, իսկ խորհրդի անդամներ են Հենրիկ Հովհաննիսյանը, Վահրամ Բաղդասարյանը և Ստեփան Զաքարյանը:

2. Հանրային հեռուստառադիոընկերության 2009 թվականի գործունեության

նպատակները

Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության գործունեությունը 2009 թվականին նույնպես նպատակաուղղված էր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների և պարտավորությունների իրականացմանը: Ոլորտում իրականացված քաղաքականության և տարվա ընթացքում ծավալված գործունեության հիմքում դրված էին հետևյալ հիմնական նպատակները.

1. Մարդու սահմանադրական իրավունքն ապահովելու նպատակով ապահովել տեղեկատվական, քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, մանկապատանեկան, գիտական, հայոց լեզվի և պատմության, մարզական, ժամանցային և հանրության համար կարևոր ու նշանակալից այլ տեղեկատվական բնույթի հաղորդումների բազմազանություն:
2. Ապահովել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված օրական 18 ժամ հեռուստահաղորդումների և օրական 50 ժամ ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման աշխատանքների իրականացումը:

3. Արբանյակային կապուղով ապահովել Հանրային հեռուստաընկերության հաղորդումների հեռարձակումը եվրոպական երկրներում, Մերձավոր Արևելքում, Աֆրիկայում և Հյուսիսային Ամերիկայում՝ սփյուռքահայությանն ու միջազգային հանրությանը հնարավորություն ընձեռելով դիտելու Հանրային հեռուստաընկերության հաղորդումները:
4. Ռադիոհաճախություններով, արբանյակային հեռարձակմամբ, ինչպես նաև ինտերնետային կապով ապահովել Հանրային ռադիոընկերության հայերեն և օտար լեզուներով հաղորդումների հեռարձակումն արտասահմանում:
5. Տեխնիկական վերազինման միջոցով բարձրացնել Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության հաղորդումների հեռարձակման որակը, ընդլայնել հեռարձակման տարածքը:
6. Եվրոպական հեռարձակողների միության, մի շարք եվրոպական, ԱՊՀ և այլ երկրների հեռուստառադիոընկերությունների հետ փոխշահավետ համագործակցության զարգացում և ընդլայնում:

Վերոնշյալ նպատակների ապահովման համար Հանրային հեռուստառադիոընկերությունը 2009 թվականին իր գործունեության հիմքում դրել է հետևյալ հիմնական խնդիրների իրագործումը.

- Հանրային հեռուստաընկերության, Հանրային ռադիոընկերության և Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից պատրաստվող և հեռարձակվող հաղորդումների բազմազանության ապահովում.
- հանրապետության տարբեր տարածքների, ազգային փոքրամասնությունների, հասարակական տարբեր շերտերի, սոցիալական խմբերի շահերը և քաղաքական ուժերի դիրքորոշումները ներկայացնող հեռուստառադիոհաղորդաշարերի ու հաղորդումների պատրաստում.
- հանրապետության ամբողջ տարածքում և արտասահմանում Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության հաղորդումների սփռման ապահովում.
- հանրությանը անկողմնակալ, հավաստի և օպերատիվ տեղեկատվությամբ ապահովում.
- հեռարձակվող հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների ընդհանուր ծավալում բնակչության լայն խավերին մատչելի հայրենական արտադրության հաղորդումների քանակի ավելացում և ամբողջությամբ հայալեզու եթերի ապահովում.
- հեռուստաընկերության և ռադիոընկերության տեխնիկական բազայի վերազինման միջոցով հանրապետության ամբողջ տարածքում հաղորդումների հեռարձակման որակի բարձրացում.
- տեխնիկական վերազինման միջոցով հեռուստառադիոհաղորդումների արտադրության տեխնիկական ծախսերի կրճատում և աշխատակիցների սոցիալական վիճակի շարունակական բարելավման ապահովում.

- հեռուստատեսության և ռադիոյի կողմից տրամադրվող տեղեկատվության նկատմամբ հանրության վստահության բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացում.
- բնակչության լայն խավերին հուզող և նրանց կողմից պարզաբանում պահանջող խնդիրների վերաբերյալ հաղորդումների և լրատվության ծավալների ավելացում.
- արբանյակային հեռարձակման տարածքի աստիճանական ընդլայնում՝ զուգահեռաբար կրճատելով այդ ուղղությամբ կատարվող ծախսերը.
- Եվրոպական հեռարձակողների միության անդամ հեռուստաընկերությունների ու ռադիոընկերությունների հետ համագործակցության ընդլայնում:

Վերը թվարկված խնդիրների իրագործմանն են ուղղվել «Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով նախատեսված միջոցները և ոլորտի ընկերությունների առևտրային գործունեությունից ստացված եկամուտները:

«Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համաձայն Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի միջոցով իրականացվել են հետևյալ ծրագրերը.

- 01.01.03.02. Միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարներ– 19671.0 հազար դրամ գումարով,
- 08.03.01.01. Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում– 96483.1 հազար դրամ գումարով,
- 08.03.01.02. Հեռուստատեսային ծառայություններ– 2708761.1 հազար դրամ գումարով,
- 08.03.01.03. Ռ-ադիո ծառայություններ– 745756.1 հազար դրամ գումարով,
- 08.03.01.04. Ռ-ադիո և հեռուստատեսային ծառայություններ– 23175.0 հազար դրամ գումարով,
- 08.03.01.06. Հասարակական կարծիքի ուսումնասիրման ծառայություններ– 10642.0 հազար դրամ գումարով:

Թվարկված ծրագրերով նախատեսված աշխատանքներն իրականացվել են «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն», «Հայաստանի հանրային ռադիոընկերություն», «Շիրակի հանրային հեռուստառադիո» և «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունների միջոցով:

Նշված ծրագրերի շրջանակներում փաստացի կատարված աշխատանքների ծավալները և դրանց դիմաց պետական բյուջեից ֆինանսավորման ցուցանիշները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

(հազար դրամ)

Ծրագրի անվանումը	Բյուջետային դասակարգման				Հաստատված բյուջե	Փոփոխություններ բյուջեում (+ -)	Բյուջեի փոփոխություններից հետո	Ֆինանսավորում	Փաստացի ծախսեր
	Բաժին	Խումբ	Դաս	Ծրագիր					
Միջազգային կազմակերպությունների և Հայաստանի Հանրապետության անդամակցության վճարներ	01	01	03	02	19671.00		19671.00	19671.00	19671.00
Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում	08	03	01	01	96483.10		96483.10	87618.35	87866.37
Հեռուստատեսային ծառայություններ	08	03	01	02	2708761.10		2708761.10	2348086.80	2348086.80
Ռադիո ծառայություններ	08	03	01	03	745756.10		745756.10	651698.80	651698.80
Ռադիո և հեռուստատեսային ծառայություններ	08	03	01	04	23175.00		23175.00	22961.90	22961.90
Հասարակական կարծիքի ուսումնասիրման ծառայություններ	08	03	01	06	10642.00		10642.00	8000.00	8000.00
Ընդամենը					3604488.30		3604488.30	3138036.85	3138284.87

3. Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ

Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը հանդիսանում է Հանրային հեռուստառադիոընկերության ղեկավար մարմինը, որն իր աշխատանքներն իրականացնում է ամենօրյա գործունեության և նիստերի միջոցով՝ ապահովելով իր գործունեության հրապարակայնությունը:

Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը սահմանում է Հանրային հեռուստառադիոընկերության հաղորդումների հեռարձակման ընդհանուր ծավալներն ու հեռուստառադիոծրագրերի (ալիքների) թիվը, Հանրային հեռուստառադիոընկերության ֆինանսական միջոցների օգտագործման կարգն ու ուղղությունները, հաստատում է Հանրային հեռուստառադիոընկերության աշխատողների կարգավիճակը և պաշտոնները, նրանց հետ կնքվող պայմանագրերի ձևերը, պայմաններն ու վարձատրման կարգը, համակարգում է իր ենթակայության ընկերությունների ընթացիկ գործունեությունը, մշակում է ոլորտի ծրագրային քաղաքականությունը, ինչպես նաև առնվազն տարին մեկ անգամ լսում է Հանրային հեռուստառադիոընկերության և Հանրային ռադիոընկերության գործադիր տնօրենների հաշվետվությունները:

Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի և նրա աշխատակազմի պահպանումն իրականացվել է «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրով նախատեսված միջոցների հաշվին: ՀՀ կառավարության 2009 թվականի մարտի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի N 1573-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորությունների ստանձնման գործընթացը կանոնակարգելու և մի շարք այլ հարցերի մասին» N 302-Ն որոշման համաձայն փոփոխություններ են կատարվել ՀՀ 2009 թվականի պետական բյուջեում, որին համապատասխան այս ծրագրով նախատեսված հատկացումներում ևս փոփոխություններ են կատարվել, և ընդհանուր գումարը կասեցվել է 6223.7 հազ. դրամի չափով: Մասնավորապես, 4286.8 հազ. դրամ կասեցվել է «Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր» ծախսային հոդվածից, 250.0 հազ. դրամ՝ «Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» ծախսային հոդվածից, 154.9 հազ. դրամ՝ «Գրասենյակային նյութեր և հագուստ» ծախսային հոդվածից և 1532.0 հազ. դրամ՝ «Տրանսպորտային նյութեր» ծախսային հոդվածից:

«Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծրագրով նախատեսված հատկացումներից ծախսվել է 87618.4 հազ. դրամ (տես աղյուսակում) և 2009 թվականի գործունեության արդյունքում Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը ունեցել է 2641.0 հազ. դրամ գումարի տնտեսում:

Ծախսային հոդվածի անվանումը	Նախահաշիվ (սկզբնական)	Կասեցումներ	Նախահաշիվ (վերջնական)	Փաստացի ծախսեր	Շեղում
Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	69686.0		69686.0	69641.5	44.5
Վճարներ Սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին	9457.8		9457.8	8344.5	1113.3
Կապի ծառայություններ	3627.6		3627.6	2302.9	1324.7
Գույքի և սարքավորումների վարձակալություն	3588.0		3588.0	3588.0	0.0
Արտասահմանյան գործուղումների գծով ծախսեր	6068.8	-4286.8	1782.0	1635.5	146.5
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	26.0		26.0	24.0	2.0
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	500.0	-250.0	250.0	249.0	1.0

Գրասենյակային նյութեր և հագուստ	454.9	-154.9	300.0	300.0	0.0
Տրանսպորտային նյութեր	3064.0	-1532.0	1532.0	1530.7	1.3
Պարտադիր վճարներ	10.0		10.0	2.3	7.8
ԸՆԴԱՄԵՆԸ	96483.1	-6223.7	90259.4	87618.4	2641.1

Ինչպես և նախորդ տարիներին, 2009 թվականին նույնպես Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդն իր աշխատակազմի միջոցով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով իրեն ամրագրված լիազորությունների շրջանակներում շարունակել է համակարգել Հանրային հեռուստաընկերության, Հանրային ռադիոընկերության և ոլորտի մյուս ընկերությունների գործունեությունը: Մասնավորապես, խորհրդի կողմից հաստատվել են ընկերությունների 2009 թվականի տարեկան եկամուտների և ծախսերի նախահաշիվները, ծրագրերի կառուցվածքը, դրանց առանձին բաժինների համամասնությունները, թեմատիկ ուղղությունները և հեռարձակման տեխնիկական միջոցների ցանկերը: Միջոցներ են ձեռնարկվել Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության օրենքով ամրագրված պարտականությունների կատարման արդյունավետության բարձրացման ուղղությամբ: Այդ նպատակով որոշակի փոփոխություններ են կատարվել Հանրային հեռուստառադիոընկերության ծրագրային քաղաքականության մեջ, մասնավորապես՝ ավելացել են սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային ուղղվածություն ունեցող հաղորդումների, ինչպես նաև հայրենական արտադրության ֆիլմերի հեռարձակման ծավալները:

Մեծ աշխատանքներ են տարվել ոլորտի միջազգային կառույցների և արտասահմանյան հեռուստաընկերությունների հետ կապերի և փոխհարաբերությունների ընդլայնման նպատակով, ինչպես նաև միջոցներ են ձեռնարկվել միջազգային մրցույթներին ակտիվ և արդյունավետ մասնակցության ուղղությամբ:

Մշակվել է Հանրային հեռուստառադիոընկերության 2010-2012 թվականների ծրագրերը և ոլորտի քաղաքականությունը:

4. «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

2009 թվականին «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը շարունակել է հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման իր առաքելությունը և պատրաստել է օրական 24 ժամ հաղորդումներ «Հ1» առաջին ալիքի, 24 ժամ «Արարատ» մշակութային հեռուստաալիքի և 24 ժամ միջազգային ծրագրի (արբանյակային հեռարձակմամբ) համար:

Հանրային հեռուստաընկերությունը պատրաստում և հեռարձակում է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով սահմանված թեմատիկ ուղղություններով հեռուստահաղորդումներ՝ փորձելով առավելագույնս բավարարել հանրության բոլոր շերտերի պահանջմունքները: Իսկ «Արարատ» մշակութային հեռուստաալիքի գործունեությունը ամբողջությամբ ուղղված էր ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության ու արդի

մշակութային կյանքի համակողմանի ներկայացմանն ու լուսաբանմանը: Բացի այդ «Արարատ» հեռուստաալիքը, աստիճանաբար ընդլայնելով իր հեռարձակման տիրույթը, հնարավորություն կընձեռի համախմբելու Հայաստանի և սփյուռքի հոգևոր ներուժը: Հեռուստաալիքի մի շարք հաղորդումներ ներկայացվում են նաև արբանյակային հեռարձակմամբ:

Հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման աշխատանքների համար «2009 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Հեռուստատեսային ծառայություններ» ծրագրով Հանրային հեռուստաընկերության համար նախատեսվել էր 2708761.1 հազ. դրամ գումար, այդ թվում՝ ընթացիկ դրամաշնորհ՝ 2630668.4 հազ. դրամ և կապիտալ դրամաշնորհ՝ 78092.7 հազ. դրամ: Սակայն ՀՀ կառավարության 2009 թվականի մարտի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի N 1573-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորությունների ստանձնման գործընթացը կանոնակարգելու և մի շարք այլ հարցերի մասին» N 302-Ն որոշման համաձայն փոփոխություններ են կատարվել ՀՀ 2009 թվականի պետական բյուջեում, որին համապատասխան 08.03.01.02 «Հեռուստատեսային ծառայություններ» ծրագրի «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով նախատեսված հատկացումներից կասեցվել է 298961.6 հազ. դրամ, իսկ «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով նախատեսված հատկացումներից կասեցվել է 61712.7 հազ. դրամ:

2009 թվականին բյուջետային հատկացումների վերոնշյալ կասեցման, տնտեսական ճգնաժամով պայմանավորված առևտրային եկամուտների կրճատման, արտարժույթի փոխարժեքի աճի և մասնավոր հեռուստաընկերությունների հետ ուժեղ մրցակցության պայմաններում Հանրային հեռուստաընկերությունը կարողացավ պահպանել իր առաջատար դիրքը հայաստանյան հեռուստաշուկայում՝ միաժամանակ ապահովելով «Արարատ» մշակութային հեռուստաալիքի 24 ժամյա հեռարձակումը:

Ընդհանուր առմամբ, «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով 2009 թվականին ընկերությանը հատկացվել է 2331706.8 հազ. դրամ, որից հեռուստահաղորդումների պատրաստման և հեռարձակման իրավունքների ձեռքբերման, ինչպես նաև ընկերության ընթացիկ գործունեության ապահովման համար հատկացվել է 1688897.6 հազ. դրամ, հեռարձակման համար՝ 642809.2 հազ. դրամ, իսկ «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով հատկացվել է 16380.0 հազ. դրամ:

Հեռուստահաղորդումների պատրաստում

2009 թվականին, պահպանելով իր առաջնային դիրքը հայաստանյան հեռուստաշուկայում, Հանրային հեռուստաընկերությունը շարունակել է հեռուստահաղորդումների արտադրության գործունեությունը: Հաղորդումների պատրաստման ընթացքում ընկերությունն առաջնորդվել է Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կողմից ընդունված նպատակային ծրագրերով: Տարվա ընթացքում «Հ1» առաջին ալիքի համար պատրաստվել է խորհրդի կողմից սահմանված թեմատիկ ուղղություններով 8708.6 ժամ հաղորդումներ:

N	Հաղորդման թեմատիկ ուղղվածությունը	Հաղորդման պատրաստման ծավալը հաշվետու ժամանակաշրջանում (ժամ)
1	Լրատվական, լրատվական-վերլուծական	741.8
2	Քաղաքական, տնտեսական, հասարակական	629.1
3	Զվարճալի	594.8
4	Գիտալուսավորչական, հայոց լեզվի և պատմության	639.3
5	Մշակութային	4194.3
6	Կրթական, մանկապատանեկան	320.3
7	Մարզական	146.6
8	Երաժշտական	732.7
9	Հոլովակներ, այլ հաղորդումներ	709.8
	Ընդամենը	8708.6


2009 թվականին Հանրային հեռուստաընկերությունը, եթերում պահպանելով մեծ հեռուստալսարան ունեցող հաղորդումներն ու հաղորդաշարերը, պատրաստել և եթեր է հեռարձակել նաև մի շարք նոր հաղորդումներ ու հաղորդաշարեր: 8702.2 ժամ մշակութային ուղղվածության հաղորդումներ ու հաղորդաշարեր են պատրաստվել ու հեռարձակվել «Արարատ» հեռուստաալիքով:

Հեռուստալսարանի չափումներ իրականացնող միջազգային ընկերության տվյալների համաձայն ՀՀ ամբողջ տարածքում Հանրային հեռուստաընկերության հեռուստադիտողների մասնաբաժինը ընդհանուր հեռուստադիտողների լսարանում 2008 և 2009 թվականներին համապատասխանաբար կազմել է 21.03 և 18.3 տոկոս (տես ստորև ներկայացված գրաֆիկներում):


Ինչպես տեսնում ենք, նախորդ տարվա համեմատ այդ ցուցանիշը որոշակիորեն նվազել է, որը պայմանավորված էր ոչ միայն բյուջետային հատկացումների և առևտրային եկամուտների կրճատմամբ, այլև հեռուստաշուկայում ուժեղ մրցակցության պայմաններում Հանրային հեռուստառադիոընկերության որդեգրած քաղաքականության համաձայն առևտրային տեսանկյունից եկամտաբեր հաղորդումների և հաղորդաշարերի հեռարձակման ծավալների նվազեցմամբ և հասարակական, քաղաքական, սոցիալ-տնտեսական ուղղվածության

հաղորդումների ծավալների ավելացմամբ: Չնայած վերոնշյալ հանգամանքներով պայմանավորված՝ Հանրային հեռուստաընկերության մասնաբաժինը ընդհանուր հեռուստադիտողների մեջ փոքր-ինչ նվազել է, այնուամենայնիվ Հանրային հեռուստաընկերությունը պահպանել է իր առաջատար դիրքը հայկական հեռուստատեսքում, և Հանրայինի մի շարք հաղորդումներ տարվա ընթացքում ունեցել են բավականին մեծ հեռուստալսարան:

Գծապատկեր 1.



Գծապատկեր 2.




«Եվրոդատա» միջազգային կազմակերպությունը յուրաքանչյուր տարի հրապարակում է ավելի քան 73 երկրների, այդ թվում՝ Հայաստանի, հեռուստատեսությունների լավագույն (մեծ հեռուստալսարան ապահոված) 15 հաղորդումները: 2009 թվականի Հայաստանի հեռուստատեսությունների ամենամեծ հեռուստալսարան ունեցող 15 հաղորդումների մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում Հանրային հեռուստաընկերության հաղորդումները՝ «Որբերը» հեռուստատեսային բազմասերիանոց գեղարվեստական ֆիլմը, «Տաշիր 2009. Ազգային 4-րդ մրցանակաբաշխություն» և «Եվրատեսիլ 2009» երաժշտական միջոցառումները, «Հայլուր» լրատվական ծրագիրը և այլն:

Հանրային հեռուստաընկերությունը, 2009 թվականին իր եթերում պահպանելով բարձր վարկանիշ ունեցող հաղորդումները, եթերը համալրել է նաև մի շարք նոր հաղորդաշարերով, որոնցից շատերը նույնպես տարվա ընթացքում ունեցել են բարձր վարկանիշ և նպաստել են եթերի բազմազանության ապահովմանը:

Հանրայինի լրատվական հաղորդումների շարքում շարունակել է իր ուրույն տեղը պահպանել «Հայլուր» լրատվական ծրագիրը, որն օրվա ընթացքում եթեր է հեռարձակվել 9.00, 13.00, 15.00, 17.00, 21.00 /հիմնական թողարկում/ ժամերին և կեսգիշերին, իսկ անհրաժեշտության դեպքում եթեր են հեռարձակվել նաև «Հայլուր»-ի լրացուցիչ թողարկումներ: «Հայլուրը» հայկական հեռուստատեսությունը շարունակել է մնալ ամենամեծ հեռուստալսարան ունեցող լրատվական ծրագիրը՝ 24.05% մասնաբաժնով:

Գծապատկեր 3.



«Հայլուր»-ի լրատվական քաղաքականության հիմքում ընկած է ժամանակակից տեղեկատվական չափանիշները կիրառելու և պահպանելու ձգտումը: Հանրայինի լրատվական քաղաքականության առանցքային խնդիրներ են հանդիսանում անհատի, հասարակության և պետության շահերը չոտնահարելը, հանրապետական լրատվական դաշտի համար օրինակելի չափորոշիչներ ձևավորելը, հայոց լեզվի մաքրությունն ու անաղարտությունը պահպանելը, ինչպես նաև հանրության համար կարևորագույն տեղեկություններ տարածելիս՝ գերագույն պատասխանատվություն կրելը:

«Հայլուր»-ի կենտրոնակայանը Երևանում է, սակայն մայրաքաղաքից դուրս թղթակցային կետեր են գործում ՀՀ մարզերում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, թղթակցություններ են ստացվում նաև Ջավախքից, Ռուսաստանից, Եվրոպայից, Միացյալ Նահանգներից: 2008 թվականից մշտական գործող թղթակցային կետեր են գործում ԱՄՆ-ում (Լոս-Անջելես և Վաշինգտոն) և Ֆրանսիայում (Փարիզ):

«Հայլուր»-ը պատրաստել է նաև «Հայլուր կիրակի» լրատվական-վերլուծական ծրագրի թողարկումները, որոնք հեռուստադիտողին են ներկայացրել մեր հանրապետությունում և արտասահմանում տեղի ունեցած կարևոր իրադարձությունները, հասարակական-քաղաքական անցուդարձը, երկրի սոցիալական վիճակն ու մշակութային նորությունները՝ համապատասխան վերլուծություններով: «Հայլուր կիրակի» լրատվական-վերլուծական ծրագիրը յուրաքանչյուր կիրակի բազմակողմ և ընդգծված ներկայացնում է այն հիմնական իրադարձությունները, որոնք ամբողջ շաբաթ եղել են Հայաստանի ու աշխարհի ուշադրության կենտրոնում, ինչպես նաև այն երևույթները, որոնք այդ օրերին գուցե և չեն եղել հասարակության ուշադրության կենտրոնում, սակայն հանրության համար կարևոր հիմնախնդիրներ են հանդիսանում:

Ազգային Ժողովի գործունեությունը Հանրայինի եթերում լուսաբանվել է «Հայլուր խորհրդարան» հաղորդաշարի միջոցով: Հաղորդաշարը հանրության է ներկայացրել պատգամավորների, խումբ-խմբակցությունների կողմից Ազգային ժողովի քառօրյա նիստերի ընթացքում քննարկման ներկայացված հիմնահարցերը, բնակչությանը հուզող սոցալ-տնտեսական, քաղաքական, մշակութային, ինչպես նաև արտաքին քաղաքականությանը վերաբերող թեմաներով պատգամավորների՝ ՀՀ կառավարությանն ուղղված հարցերն ու դրանց պատասխանները: Հանրայինը հեռարձակել է նաև Ազգային Ժողովի «Խորհրդարանական շաբաթ» մեկժամյա թողարկումը:

Քաղաքական, տնտեսական, հասարակական հաղորդումների շարքը համալրվել է նոր հաղորդաշարերով: 2009 թվականին Հանրայինի եթերում էին «Բանաձև» և «Եվրոպական բանաձև» հեռուստանախագծերը, որոնց քննարկման առանցքային թեմաներն էին մարդու իրավունքները, եվրոպական ինտեգրման և քաղաքացիական հասարակության ձևավորման հիմնահարցերը և այլն:

«Հատուկ Ռեպորտաժ» հաղորդաշարը հանրությանն է ներկայացրել յուրահատուկ և հետաքրքիր պատմություններ մարդկանց, երևույթների և իրադարձությունների մասին,

կատարվել են յուրօրինակ լրագրողական հետազոտություններ՝ արդյունքները հանձնելով հեռուստադիտողի դատին:

Հանրային հեռուստաընկերությունը իր եթերում շարունակել է հանրությանը ներկայացնել ՀՀ կառավարության գործունեությունը՝ հնարավորինս ամբողջական, սպառիչ և հասարակական հետաքրքրություն ներկայացնող տեղեկություններ հաղորդելով անցած շաբաթվա ընթացքում կառավարությունում ընդունված կարևորագույն որոշումների, քննարկումների մասին՝ միաժամանակ ներկայացնելով գործադիր իշխանության տնտեսական քաղաքականությունը, տարբեր ոլորտներում դրա իրականացման ընթացքն ու արդյունքները:

Հանրայինի եթերում բանակային բազմաբովանդակ կյանքը լուսաբանել է ՀՀ ՊՆ տեղեկատվության վարչության «Ջինուժ» ծրագիրը, որը հանրությանն է ներկայացնում հայկական բանակի շաբաթվա առօրյան՝ միջազգային ռազմաքաղաքական շփումներ, մարտական հերթապահություն, զորամասային կյանք, զորավարություններ, զինվորական ճակատագրեր, զինվոր-հրամանատար հարաբերություններ, պատմական-մշակութային նյութեր, ինչպես նաև անդրադարձ բանակի անցած հերոսական ուղուն:

Մինչ 2009 թվականի հոկտեմբեր ամիսը, շարունակվել է հեռարձակվել «Առաջին ծրագիր» հաղորդաշարը, որն անդրադառնում էր հանրապետությունում տեղի ունեցող մշակութային, մարզական իրադարձություններին, ինչպես նաև տնտեսության, գիտության, կրթության և այլ բնագավառներում արձանագրվող փաստերին ու նորություններին: Անդրադարձերն ու քննարկումներն իրականացվում էին ծրագրի տաղավարում տվյալ ոլորտին ու երևույթին առնչվող մարդկանց հյուրընկալելու միջոցով՝ առաջնորդվելով օպերատիվության և օբյեկտիվ տեղեկատվության տրամադրման սկզբունքներով: Հաղորդաշարը ներառում էր նաև «Եվ դարից երկար ձգվում է օրը» էջը, որում անդրադարձեր էին լինում անվանի հայերին, նրանց ծննդյան օրերին:

«Կարծիք» հաղորդաշարը հանրությանն է ներկայացրել հանրապետության բոլոր բնակավայրերում՝ սահմանային գյուղերում, Արցախում, ինչպես նաև Վրաստանի հայկական բնակավայրերում տիրող իրական իրավիճակն ու պատկերը: Հաղորդաշարի օբյեկտը փոքր համայնքներն են՝ պատմական ու մշակութային անցյալով, այսօրվա տնտեսական, սոցիալական, կրթամշակութային հիմնախնդիրներով: Հաղորդման ընթացքում, չմիջամտելով գործողությունների բնական զարգացմանը, հնարավորություն է տրվում հասարակ մարդկանց հեռուստաերկխոսության միջոցով լսելի դարձնել իրենց ձայնը հասարակական հնչեղություն ունեցող հիմնախնդիրների վերաբերյալ:

«Մերոնք» հեռուստանախագիծը պատմում է տարբեր երկրներում ապրող մեր հայրենակիցների մասին, ծանոթացնում է հայ հեռուստադիտողին սփյուռքում ապրող մեր հայրենակիցների հետ, որոնք պատմում են իրենց կյանքի, գործունեության և այն երկրի մասին, որտեղ այժմ ապրում են:

Քաղաքական, տնտեսական, հասարակական հաղորդումների շարքում իր ուրույն տեղն ունի ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապի և լրատվության վարչության «02» հաղորդաշարը, որը օգնում է ճանաչել ու հարգել քաղաքացու և պետության իրավունքներն ու պարտականությունները: Հաղորդաշարում տեղ գտած մի քանի մշտական խորագրեր վաղուց արժանացել են հեռուստադիտողի դրական գնահատականին՝ «Հատուցման ժամը», «Դատական անդրադարձը», «Ինձ բացակա չդնեք»:

2009 թվականի նոր եթերաշրջանից հեռուստաեթերում է «Երջանկության մեխանիկա» հաղորդաշարը, որի մասնակիցները՝ ճանաչված ու հայտնի մարդիկ, ընտանեկան միջավայրում ներկայանում են ընտանեկան երջանկությանը վերաբերող իրենց պատմություններով ու տեսակետներով: Նրանց միջամտում և լրացում են ընտանիքի անդամները՝ արդեն իրենց ընկալումներով ու տեսակետներով՝ փորձելով հայտնի ու ճանաչված մարդկանց ընտանեկան սիրալիր ու բարեկամական մթնոլորտը փոխանցել հեռուստադիտողին:

2009 թվականի ընթացքում Երևանի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում Հանրայինը վճարովի և անվճար եթերաժամանակ է տրամադրել Երևանի ավագանու ընտրություններում գրանցված կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին, ընդ որում տրամադրվել է մոտ 207 րոպե անվճար և 189 րոպե վճարովի եթերաժամանակ: Միաժամանակ Հանրայինը իր լրատվական վերլուծական ծրագրերում հավասարակշռված և անկողմնակալ պայմաններով լուսաբանել է թեկնածուների նախընտրական քարոզարշավը:

Հանրային հեռուստաընկերության եթերում հեռարձակվել են զվարճալի մի շարք հաղորդաշարեր՝ «Ծիծաղի տուն», «Աշտի մոտ», «Շաբաթ երեկո», «Երկու աստղ» և այլն:

Արամայիս Սահակյանի «Ծիծաղի տուն հաղորդաշարի հյուրերն էին անվանի մարդիկ, որոնք պատմում են իրենց և մյուս անվանի մարդկանց հետ կապված սրամիտ և իրական պատմություններ: Հաղորդման ընթացքում հնչում են նաև երաժշտական ուրախ կատարումներ, դերասանական նմանակումներ, ինչպես նաև ժողովրդական կատակներ:

2009 թվականին Հանրային հեռուստաընկերությունը շարունակեց աշխարհում հայտնի «Երկու աստղ» շվեդական հեռուստանախագծի ցուցադրությունը: Երաժշտական-ժամանցային այս ծրագիրն արդեն իր ուրույն տեղն է գրավել հայկական հեռուստաեթերում: Շոուի մասնակից զույգերը կազմվում են մեկ ճանաչված երգչից կամ երգչուհուց և կրկին ճանաչված, բայց այլ ոլորտի (սպորտ, քաղաքականություն, թատրոն և այլն) ներկայացուցչից, որոնք ներկայացնում են հանրության կողմից սիրված, հանրահայտ ստեղծագործություններ: Իսկ ժյուրին ու հեռուստադիտողը յուրաքանչյուր եթերի ժամանակ, որն իրականացվում է ուղիղ եթերում, գնահատում են մասնակից զույգերի կատարողական ու արտիստիկ տվյալները:

«Ինչու է աղմկում անցյալը» հաղորդաշարը հայոց պատմության էկրանավորված տարբերակն է, որն անդրադառնում է պատմության հայտնի դեպքերին ու իրադարձություններին, փորձում է ներկայացնել պատմության չբացահայտված ու քողարկված էջերը: Այս

հաղորդաշարի շրջանակներում քաղաքական իրադարձություններին զուգահեռ անդրադարձ է կատարվում նաև տնտեսական, մշակութային կյանքին ու հասարակ ժողովրդի առօրյային ու ճակատագրին: Ծրագրի մեկնարկային կետը Հայաստանի Առաջին Հանրապետության ճակատագրի շրջանն է՝ 1918 թվականը:

Միջուկում ապրող մեր հայրենակիցների մասին է պատմել «Օտար, ամայի ճամփեքի վրա» հաղորդաշարը: Ծրագիրը պատմում է տարբեր երկրների ու քաղաքների մասին, որտեղ ապրում են մեր հայրենակիցները, չմոռանալով նաև տվյալ երկրների տեսարժան վայրերն ու մշակութային արժեքները: Եզակի նկարահանումներ են կատարվել տարբեր երկրների թանգարաններում, տաճարներում, պալատներում և համալիրներում: Իսկ «Հայաստանի ճամփեքով» հաղորդաշարը պատմում է Հայաստանի քաղաքների, գյուղերի պատմաճարտարապետական հուշարձանների, ինչպես նաև մարդկային ինքնատիպ ճակատագրերի մասին: Հաղորդումը հետապնդում է ճանաչողական նպատակներ՝ Հայաստանը հնարավորինս մանրամասն հեռուստադիտողին ներկայացնելու համար: Հարկ է նշել, որ նման ուղղվածություն ունեցող հաղորդումներից «Հայաստանի ճամփեքով» հաղորդաշարն ունի ամենաբարձր վարկանիշը:

Շարունակվել է հեռարձակվել «Կարոտ» հաղորդաշարը, որը ոչ միայն բարձրաձայնում է բնակիչների խնդիրների մասին, այլև յուրաքանչյուր բնակավայրում բնակիչների ջանքերով վեր հանում, վերապրում ու հեռուստադիտողին է ներկայացնում այն ավանդույթներն ու սովորույթները, որոնց ակունքը հայկականն է: Յուրաքանչյուր հաղորդում ներկայացնում է տվյալ բնակավայրի պատմությունը՝ սկսած հնագույն շրջանից, ներկայացվում են պատմաճարտարապետական ուշագրավ հուշարձանները, նաև բնակավայրի գեղատեսիլ այն հատվածները, որոնց հետ ժողովրդական-ազգագրական ավանդույթներ, սովորույթներ են առնչվում:

2009 թվականից Հանրայինը ցուցադրում է «Դատաժամ» հաղորդումը, որը հնարավորություն է տալիս քաղաքացիներին իրազեկվել իրենց իրավունքների ու պարտականությունների մասին, ինչպես վերականգնել խախտված իրավունքը, հետամուտ լինել իրավունքների պաշտպանությանն ու ինչպես ներկայացնել դրանք: Հեռուստադատարանում ընթանում է մրցակցային դատավարություն, և հայցվորն իր շահերն ու խախտված իրավունքների վերականգնման պահանջներն է ներկայացնում պատասխանողին, հաղորդումն իր մեջ ընդգրկում է նաև լսարանային քննարկումներ, տրվում են պարզաբանումներ ու եզրահանգումներ:

2009 թվականից Հանրայինի եթերում էր նաև «Հայտնի անհայտը» նոր հաղորդաշարը, որը պատմում է անցյալում տեղի ունեցած հայտնի կամ ոչ այնքան հայտնի իրադարձությունների մասին՝ բացահայտելով մինչ այդ չիրապարակված դրվագներ:

Հանրայինը 2009 թվականին հեռուստադիտողին է ներկայացրել նաև մի շարք փաստագրական ֆիլմեր և ֆիլմաշարեր, որոնցից հատկապես հաջողություն են ունեցել «Արամ Մանուկյան» և «Կիլիկիա» փաստագրական ֆիլմերը: «Արամ Մանուկյան» ֆիլմ-հաղորդումը

նվիրված էր ականավոր պետական գործիչ, Հայաստանի Առաջին Հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանի ծննդյան 130 ամյակին: Նրա անվան հետ է կապված Վան-Վասպուրականի ինքնապաշտպանության կազմակերպումը, 200 հազար վանեցիների փրկությունը կոտորածից, Արևելյան Հայաստանի 660 հազար հայ բնակչության պաշտպանությունը ազգի գլխին կախված թուրքական բնաջնջումից: Իսկ «Կիլիկիա» փաստագրական ֆիլմը նվիրված էր Կիլիկիայի հայկական թագավորության փառահեղ պատմությանը, թե ինչպես է պատմական Հայաստանի տարածքից դուրս ստեղծվել և գոյատևել հայկական այդ եզակի թագավորությունը՝ գտնվելով աշխարհաքաղաքական բարդ ու խճճված տարածաշրջանում:

Հանրային հեռուստաընկերության եթերում միշտ մեծ տեղ են գրավել մշակույթին, մասնավորապես, հայկական մշակույթին նվիրված հաղորդումները: Դրանք բազմաբնույթ են իրենց ընդգրկումներով և ի գորու են բավարարելու հասարակության ամենատարբեր շերտերի հետաքրքրասիրությունները: Հեռուստադիտողը հեռուստաէկրանի միջոցով հնարավորություն է ունենում շփվելու արվեստին, գրքին և գրչին նվիրված մարդկանց, մտավորականների հետ, լսելու մշակութային նորություններ, իմանալու այս ոլորտի նոր ձեռքբերումների մասին, առնչվելու դասականին: Հարկ է նշել, որ 2009 թվականին ցուցադրված 10 ամենամեծ հեռուստալսարան ունեցող մշակութային հաղորդումներից 8-ը հեռարձակվել է «Հ1» Առաջին ալիքի եթերում:

2009 թվականի հունվարից ամբողջ ծավալով իր գործունեությունն է սկսել «Արարատ» մշակութային հեռուստաալիքը, որը հեռուստաեթերը համալրել է նոր և բազմաբնույթ մշակութային հաղորդումներով ու հաղորդաշարերով՝ հնարավորություն ընձեռելով առավելագույն չափով բավարարել հանրության բոլոր շերտերի մշակութային պահանջումներն ու ակնկալիքները:

Մեր օրերի թատերական անցուդարձին է անդրադառնում «Ներկայացումը շարունակվում է» հաղորդաշարը, որում լուսաբանվում և մեկնաբանվում են գրեթե բոլոր թատրոններում բեմադրված ներկայացումները հստակ հարցադրումներով. որո՞նք են ստեղծագործողների ձգտումները, ի՞նչ են որոնում բեմադրիչները, որո՞նք են խաղացանկային և արդի հայ դրամատուրգիայի խնդիրները: Հաղորդաշարը անդրադառնում և բարձրաձայնում է նաև թատրոններում ծագած խնդիրների մասին: 2009 թվականին հեռարձակվել է նաև «Կերպարվեստ» հաղորդաշարը, որը ներկայացնում է հայ կերպարվեստի ներկայացուցիչներին, նկարչի, քանդակագործի ստեղծագործական ավանդը, ստեղծագործությունները և նրա տեղն ու դերը մեր կերպարվեստի պատմության մեջ:

2009 թվականին Հանրային հեռուստաընկերության «Հ1» առաջին ալիքի եթերում բավականին մեծ տեղ են գրավել գեղարվեստական ֆիլմերն ու հայրենական արտադրության հեռուստասերիալները: Մասնավորապես, 2009 թվականին բավականին մեծ հաջողություն են ունեցել «Որբերը» հեռուստասերիալը և «Հանուն սիրո» բազմասերիանոց հեռուստանովելը, որոնք ունեցել են բավականին մեծ հեռուստալսարան: Հարկ է նշել, որ 2009-ին «Որբերը»-ը

հայկական հեռուստատեսություն ցուցադրված 10 ամենամեծ լսարան ունեցող հեռուստահաղորդումներից մեկն էր:

Հանրային հեռուստառադիոընկերության որդեգրած քաղաքականության կարևոր ուղղություններից մեկը հայ և օտարազգի դասականների գործերի էկրանավորումն է: 2009 թվականին Հանրայինը ցուցադրեց Նար-Դոսի համանուն վեպի հիման վրա նկարահանված «Մպանված աղավնին» հինգ մասից բաղկացած հեռուստատեսային գեղարվեստական ֆիլմը, իսկ 2009 թվականի նոր եթերաշրջանից Հանրայինի եթերում էր Ռեմարկի «Երեք ընկերը» վեպի հիման վրա նկարահանված հեռուստատեսախալը: 2009 թվականին սկսվել են նաև Բաֆֆու «Խաչագողի հիշատակարանը» և Շիրվանզադեի «Արտիստը» վեպերի հիման վրա համանուն վերնագրերով հեռուստատեսային գեղարվեստական ֆիլմերի նկարահանման աշխատանքները:

Հանրային հեռուստաընկերությունը 2009 թվականից հեռարձակում է «Կյանքի կարուսելը», որը նոր ձևաչափի հեռուստահաղորդում է: Յուրաքանչյուր հաղորդում մի առանձին փոքրիկ ֆիլմ է՝ նկարահանված իրական կյանքում հաճախակի հանդիպող պատմությունների ու դրվագների հիման վրա:

2009 թվականին շարունակվել են կրկնօրինակման աշխատանքները: Կրկնօրինակվել են բազմաթիվ գեղարվեստական, փաստագրական, ճանաչողական ու գիտահանրամատչելի կինոնկարներ, հեռուստատեսախալներ, մուլտիպլիկացիոն ֆիլմեր, որոնք հեռարձակվել են բացառապես հայերեն:

Ամենշաբաթյա «Թատրոն» հաղորդաշարը, որի վարողը և հեղինակը ՀԹԳՄ-ի նախագահ և ռեժիսոր Հակոբ Ղազանչյանն է, անդրադառնում է Հայաստանի թատերական կյանքի իրադարձություններին, այդ թվում՝ Հայաստանում կայացած հյուրախաղերին: Քննարկվում են ներկա փուլում թատրոնների առջև ծառայած հիմնախնդիրները, անդրադարձ է կատարվում նաև թատրոնների խաղացանկային քաղաքականությանը, առաջիկա կազմակերպվելիք փառատոններին, արտագնա հյուրախաղերին: Հյուրերը թատերական աշխարհի մարդիկ են՝ թատերագետներ, ռեժիսորներ, դերասաններ, բեմադրիչներ, որոնք զրուցում են թատերական կյանքի արդի վիճակի շուրջ:

«Ութ ու կես» հաղորդաշարը հայ բարձրաճաշակ կինոդիտողներին է ներկայացնում բազմաթիվ բարձրարվեստ ֆիլմեր: Հաղորդաշարը ներկայացնում է մեծ էկրանի համաշխարհային պատմության լավագույն ֆիլմերը, անդրադառնում մեր ժամանակների տարբեր կինոփառատոնների անվանակարգերում ներկայացված և մրցանակների արժանացած նորագույն գործերին, ծանոթացնում համաշխարհային հայտնի դերասանների, ռեժիսորների, կինոքննադատների կարծիքներին:

«Հանդիպում» հաղորդաշարի հեղինակները առաջին անգամ «Արարատ» ալիքով հեռուստադիտողին ծանոթացնում են հանրապետության ճանաչված երաժշտական գործիչների, օպերային բեմադրությունների, հյուրախաղերի եկած արտիստների հետ: Հաղորդաշարի հեղինակը, ելնելով հաղորդման խորագրից, հարցազրույցի միջոցով ներկայացնում է տաղավարի

հյուրին, պատմում նրա անցած ստեղծագործական ուղու մասին, ծանոթացնում նրա ապագա ծրագրերի հետ և, իհարկե, հեռուստադիտողի դատին ներկայացնում երաժշտական դրվագներ օպերային, բալետային ներկայացումներից, համերգային կատարումներ հանդիպման հերոսի մասնակցությամբ: Հաղորդաշարի ուշադրության կենտրոնում է նաև հանրապետության երաժշտական կյանքում տեղի ունեցող կարևոր իրադարձությունները /հոբելյաններ, հյուրախաղեր, երաժշտական իրադարձային երևույթներ, պրեմիերաներ/:

«Հայից հայ» հաղորդաշարը պատմամշակութային անդրադարձ է հայտնի մարդկանց ու իրադարձություններին, որոնց ճանաչողն ու գնահատողը, իհարկե, հեռուստադիտողն է:

Մշակութային ուղղվածություն ունեցող հաղորդումներից հեռարձակվել է նաև «Վերնատունը», որտեղ մարդիկ, ովքեր իրենց գործի գիտակներն են ու վառ ներկայացուցիչները (մշակույթի, արվեստի, սպորտի, գիտության և կրթության գործիչներ), հաղորդավարի հետ քննարկում և վերլուծում են ժամանակակից հասարակությանը հուզող հրատապ հարցեր:

«Մշակութային հայացք» հաղորդաշարը հանդիպում և զրույց է մշակույթի, արվեստի և սպորտի Հայաստանի ու Ռուսաստանի դաշնության գործիչների հետ, ընդ որում՝ նկարահանումները կատարվում են Մոսկվայում:

«Խաչփողան» ամենշաբաթյա հաղորդման ընթացքում հանդիպում ու հատվում են տարբեր մտքեր ու կարծիքներ: Այստեղ քննարկվում են հեռուստադիտողին հետաքրքրող բազմաթիվ իրադարձություններ ու խնդիրներ, մշակութային ժառանգության տիրապետման, ուսումնասիրման, աշխարհին ներկայացնելու բազմաթիվ հրատապ հարցեր և այլն: Հրավիրվում են Հայաստանի և սփյուռքի գիտության անվանի ներկայացուցիչներ:

«Հոբելյան»-ը գիտության և մշակույթի նշանավոր մարդկանց հոբելյաններին նվիրված հաղորդաշար է, որը ներկայացնում է հոբելյարի կյանքն ու գործը, նրա վաստակը և թողած ժառանգությունը մեր գիտության և մտավոր բնագավառում:

«Ծննդավայր» շաբթը արդեն յոթ տարի է, ինչ եթերում է և նվիրված է հայ մշակույթի անվանի գործիչներին: Հաղորդաշարը հատկապես անդրադառնում է արևմտահայ և սփյուռքահայ մշակույթի մեծերին, ներկայացնում նրանց կյանքն ու գործունեությունը: Երբեմն հաղորդման նյութ կարող են ծառայել Սփյուռք-Հայաստան կարևորագույն իրադարձությունները, ինչպես օրինակ՝ Հայ և օտարագիր գրողների համաժողովները: Հաճախ անդրադարձ է լինում հոգևոր և մշակութային կենտրոններին, ինչպես պատմական անցյալի /Սուրբ Ղազար, Երուսաղեմ, Պոլիս, Անի, Երզնկա/, այնպես էլ նորօրյա գաղթօջախներին և նրանց մշակութային կյանքին:

«Արարատ» հեռուստաալիքի եթերում է «Հեքիաթն է կանչում» մանկական հաղորդաշարը, որի ընթացքում մատուցվում են հետաքրքիր հեքիաթներ երեխաների համար, իսկ վերջում ցուցադրվում է մուլտֆիլմ հայերեն լեզվով: Մանկական հաղորդաշարի նպատակն է աճող սերնդի մեջ ազնվություն, ընկերասիրություն, բարոյականություն, ինքնուրույն մտածելու, որոշումներ կայացնելու և բազմաթիվ այլ դրական հատկանիշներ զարգացնելը: Ի դեպ, այն միակ

հաղորդաշարն է երեխաների համար, որն ուղեկցվում է սուրդո թարգմանությամբ (2009 թվականին՝ 54.9 ժամ):

«Մենք ենք» պատանեկան հաղորդաշարը անդրադառնում է տարածաշրջանային համագործակցության հիմնախնդիրներին: Ամեն շաբաթ Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի պատանի լրագրողները «Ինտերնյուսի» Մանկական Խաչմերուկ ծրագրով ներկայացնում են իրենց հաղորդաշարը՝ ժամանց, խնդիրներ, ճամփորդություն, նոր մարդիկ ու հին ընկերներ: Պատանիները ներկայացնում են իրենց ռեպորտաժները, ճամփորդությունները, հոգսերն ու զվարճությունները:

«Ծագումով հայերը» հաղորդաշարը շարունակում է իր ճանապարհորդությունը աշխարհով մեկ՝ ներկայացնելով գիտական նվաճումներ, ճարտարապետական գլուխգործոցներ, քաղաքական հզոր անհատականություններ, կինոարվեստի ստեղծագործություններ, գեղարվեստական մնայուն արժեքներ: Դրանց հեղինակները հայեր են՝ աշխարհով մեկ սփռված հայերի զավակներ, որոնց մասին քչերը գիտեն կամ բնավ չգիտեն: Հաղորդաշարը հայտնաբերում և հայ հեռուստադիտողին է ծանոթացնում արտասահմանում ապրող և ստեղծագործող այն հայ գործիչներին, ովքեր մեծ ներդրում ունեն համաշխարհային մշակույթի և գիտության ասպարեզում, սակայն ճանաչված չեն հայրենիքում:

«Կանանց աշխարհը, աշխարհի կանայք» հեռուստահաղորդումը նկարահանվում է տարբեր երկրներում, և հիմնական թեման կանայք են ու նրանց աշխարհը: Հաղորդումը ծանոթացնում է ինչպես շատ հայտնի ու մեծ նվաճումներ ձեռք բերած կանանց կյանքին, այնպես էլ աշխարհի տարբեր անկյուններում ապրող հասարակ կանանց:

«Խոհանոցի հազար ու մի գաղտնիքները» հաղորդաշարը յուրօրինակ ճանապարհորդություն է Հայաստան աշխարհի քաղաքներով ու գյուղերով՝ պատմելով ազգային խոհանոցի ավանդույթների ու գաղտնիքների մասին: Հաղորդաշարի ընթացքում ներկայացվում են հետաքրքիր փաստեր, մանրամասներ հայ ժողովրդի պատմական և խոհարարական արվեստի անցյալից, ազգային խոհանոցին նվիրված ավանդական տոնակատարություններ և ծեսեր:

«Արարատ» հեռուստաալիքը ցուցադրում է նաև երաժշտական ուղղվածություն ունեցող հաղորդումներ և հաղորդաշարեր՝ «Ջազի ժամը», «Պատրաստված է ԽՍՀՄ-ում», «Մեր ռետրոն» և այլն: «Ջազի ժամը» շաբթը արդեն 10 տարի էթերում է և ներկայացնում է ջազարվեստի լավագույն նմուշները, ծանոթացնում հեռուստադիտողներին ջազի պատմության, նրա ոճերի, ուղղությունների և մեծագույն ջազային երաժիշտների արվեստի հետ: Ծրագիրը ներկայացնում է նաև հայկական ջազի լավագույն նմուշները: Ծրագրում պարբերաբար հայտնվում են «Ջազի պատմության էջերը», «Ջազային օրացույց», «Հարցազրույց», «Ջազի ժպիտներ» խորագրերը:

«Պատրաստված է ԽՍՀՄ-ում» հաղորդաշարով անդրադարձ է կատարվում հին խորհրդային ժամանակաշրջանի երգերին, իսկ «Մեր ռետրոն» ներկայացնում է 1950-80-ականների սիրված հայկական երգերը:

«Արարատ» հեռուստաալիքով եթեր է հեռարձակվում նաև «Դասական ալիք» հաղորդաշարը: Այստեղ հիմնականում ներկայացվում են դասական երաժշտության ստեղծագործություններ, առանձին երաժիշտ կատարողներ՝ դիրիժորներ, դաշնակահարներ, ջութակահարներ, երգիչ-երգչուհիներ: «Դասական ալիք» ծրագրով հեռուստադիտողին է ներկայացվում օպերային, սիմֆոնիկ, գործիքային, վոկալ ստեղծագործություններ:

«Արարատ» հեռուստաալիքով հեռարձակվել է նաև «Պարականոն» հաղորդաշարը, որը հանրությանն է ներկայացրել հանրաճանաչ երգահանների, երաժիշտների կենսագրության կարևորագույն դրվագներ, սկանդալային իրադարձություններ և հետաքրքրաշարժ պատմություններ:

«Արարատ» հեռուստաալիքի եթերում հատուկ տեղ է գրավում «Հայկական էստրադան», որը ներկայացնում է հայրենական լավագույն երաժշտական տեսահոլովակները: Յուրաքանչյուր տեսահոլովակների օգտին կատարված քվեարկությունների արդյունքում ձևավորվում է շաբաթվա լավագույն տասնյակը (TOP 10-ը), որը ներկայացվում է «Հ1» Առաջին հեռուստաալիքի «Թոփ 10» երաժշտական ծրագրի շրջանակներում:

Մշակութային բազմաթիվ հաղորդումների հետ մեկտեղ «Արարատ» հեռուստաալիքը հեռուստադիտողին է ներկայացնում նաև «Հայֆիլմ» կինոստուդիայի, «Երևան» ստուդիայի կողմից նկարահանված գեղարվեստական և վավերագրական ֆիլմերը, բարձրաճաշակ գեղարվեստական ֆիլմերը, մշակութային ուղղվածության փաստագրական հեռուստաֆիլմերը:

Հանրային հեռուստարձեկության եթերում շարունակվել են հեռարձակվել կրթական, մանկապատանեկան մի շարք հաղորդումներ, որոնք քննարկել են երիտասարդությանը հուզող կարևոր խնդիրներ ու հիմնահարցեր:


2009 թվականին շարունակվել է հեռարձակվել «Հայ ասպետ» հեռուստամրցախաղը, որի նպատակն է երեխաների հիմնախնդիրներով զբաղվող մասնագետների ու կազմակերպությունների, հասարակության և իրավասու պետական մարմինների ուշադրությունը հրավիրել ապագա սերնդի հայեցի դաստիարակության խնդիրներին, վերջինիս մոտենալ ազգային անվտանգության դիրքերից, մրցակցության միջոցով դպրոցների և երեխաների մեջ առաջացնել հետաքրքրություն ազգային նկատմամբ և արթնացնել պատվախնդրության զգացում սեփական երկրի ճանաչողության անհրաժեշտության հարցում: Հեռուստանախագծի նպատակն է խթանել դպրոցականների ձգտումը գիտելիքների ձեռքբերման ու խորացման մեջ, նպաստել հայ պատանու ինքնաճանաչողական հիմքով համակողմանի զարգացմանը:

«Այբ, բեն, գիմ» հաղորդաշարը կազմված է զրույցներից, որոնց թեմատիկան հիմնականում ուղղված է մայրենի լեզվին, խոսվում է արտասանական, քերականական սխալների մասին, որոնք գրառվում են մամուլից և հեռուստաեթերից: Երբեմն զրույցի է հրավիրվում այդ խնդրով մտահոգված որևէ գիտնական, լեզվաբան, մանկավարժ:

Երկրի մարզական կյանքը և միջազգային մարզական միջոցառումները լուսաբանելու նպատակով եթեր են հեռարձակվել մարզական մի շարք հաղորդումներ: Չեռք են բերվել

իրավունքներ և Հայաստանում հեռարձակվել են ֆուտբոլի ՀՀ ազգային հավաքականի աշխարհի առաջնության ընտրական խաղերը, Ֆուտբոլի Եվրոպայի Չեմպիոնների լիգայի խաղերը, Կանանց Բասկետբոլի Եվրալիգայի խաղերը, ծանրամարտի աշխարհի և Եվրոպայի առաջնությունները: 2009 թվականի ընթացքում հեռարձակված 10 լավագույն սպորտային հանդիպումներից 7-ը ցուցադրվել է Հանրային հեռուստարձևերությամբ (տես գծապատկեր 4.-ում), որոնցից ամենաբարձր վարկանիշը ունեցել է Թուրքիա-Հայաստան ֆուտբոլային հանդիպումը (դիտել է 320.1 հազ. մարդ): Շաբաթը մեկ անգամ հեռարձակվել է «Ֆուտբոլ Առաջինով» մարզական հաղորդաշարը, որի ուշադրության կենտրոնում Հայաստանի ազգային հավաքականն է՝ ընտրական և ընկերական հանդիպումներով:

Գծապատկեր 4.




Համակողմանիորեն լուսաբանվել են տարբեր տարիքի հավաքականների ելույթները, մեր ակումբների մասնակցությունը Եվրագավաթներին, Հայաստանի «Մթաբ» ազգային առաջնությունը, Հայաստանի գավաթի խաղարկությունը: Հաղորդաշարը պարբերաբար անդրադարձել է Եվրոպայի հրաշալի հնգյակի/ Իսպանիա, Անգլիա, Իտալիա, Գերմանիա, Ֆրանսիա/ ֆուտբոլի ազգային առաջնություններին, Իսպանիայի և Անգլիայի գավաթի խաղարկություններին: Իսկ շախմատասերների համար շարունակվել է եթեր հեռարձակվել «Շախմատ-64» վերլուծական հաղորդաշարը: Շախմատը Հայաստանում հենակետային մարզաձև է: Վերջին տարիներին ամենափմաստուն խաղի մեր վարպետները հասել են փառահեղ նվաճումների: «Շախմատ 64» հաղորդաշարը համակողմանիորեն լուսաբանել է բոլոր շախմատային միջոցառումները՝ մանրամասն տեղեկություններ հաղորդելով այդ մրցաշարերում մեր մարզիկների մասնակցության մասին:

2009 թվականին Հանրային հեռուստարձևերության եթերում ցուցադրվել են հանդիսատեսի կողմից մեծ ժողովրդականություն վայելող մի շարք երաժշտական խոշոր միջոցառումներ և

համերգներ («Եվրատեսիլ 2009», «Մանկական եվրատեսիլ 2009», «Ազգային երաժշտական մրցանակաբաշխություն 2008», «Տաշիր 2009. ազգային չորրորդ մրցանակաբաշխություն» և այլն): Հարկ է նշել, որ «Եվրատեսիլ 2009»-ը և «Տաշիր 2009 ազգային չորրորդ մրցանակաբաշխություն»-ը մտել են տարվա ընթացքում ցուցադրված ամենամեծ վարկանիշ ունեցող 10 հաղորդումների մեջ, իսկ 10 ամենամեծ հեռուստալսարան ունեցող երաժշտական հաղորդումներից 9-ը հեռարձակվել է Հանրայինով (տես գծապատկեր 5.-ում):

Գծապատկեր 5.



Հաղորդացանցում իրենց ուրույն տեղը շարունակել են պահպանել նաև երաժշտական հաղորդումները՝ «Երաժշտական փոստարկղը», «Թոփ 10-ը», «Ռ-ուփիկոնը» և այլ համերգային ծրագրեր ու հաղորդումներ: «Երաժշտական փոստարկղ»-ը հանրությանն է մատուցում բազմաժանր ու բազմազան երաժշտական ոճեր՝ դասական, ազգային, ժողովրդական, ազգագրական, հայկական և արտասահմանյան էստրադա, հեղինակային երգ, երաժշտական նորություններ: «Թոփ 10» երաժշտական ծրագրի ընթացքում ներկայացվում են շաբաթվա կտրվածքով հեռուստադիտողների քվեարկությունների հիման վրա ընտրված 10 լավագույն տեսահոլովակները, իսկ տարվա վերջում տեղի է ունենում մրցանակաբաշխություն: Արդեն ավանդույթ է դարձել, որ Հայաստանում տեղի ունեցող գրեթե բոլոր երաժշտական նորությունները, մասնավորապես՝ երգերի, տեսահոլովակների պրեմիերաները, լուսաբանվում և ցուցադրվում են «Ռ-ուփիկոնի» ընթացքում: Ավելին՝ այդ ամենն ուղեկցվում է հեղինակների, ստեղծագործական անձնակազմի և համապատասխան մասնագետների թեժ քննարկմամբ:

2009 թվականին Հանրային հեռուստաընկերությունը հայ հեռուստադիտողին ներկայացրեց «Եվրատեսիլ 2009» մրցույթ փառատոնը (հարկ է նշել, որ այն 2009 թվականին հայկական հեռուստատեսքերում ամենաբարձր վարկանիշ ունեցող երաժշտական հեռուստանախագիծն էր՝ 71.48%), որտեղ Հայաստանը ներկայացրեցին Ինգա և Անուշ Արշակյան քույրերը: Հանրային հեռուստաընկերությունը ներկայացրեց նաև «Մանկական

եվրատեսիլ 2009» մրցույթ փառատոնը (այն իր վարկանիշով վեցերորդ էր՝ 45.25%), որը ներկայացրեց Լուարա Հայրապետյանը՝ գրավելով երկրորդ հորիզոնականը: 2009 թվականին շարունակվել է երաժշտական ուղղվածություն ունեցող «Բենեֆիսը» հեռուստանախագծի ցուցադրությունը, որը հնարավորություն է տալիս ավելի լավ ճանաչել մեր շուր-բիզնեսի ներկայացուցիչներին:

Հեռուստահաղորդումների հեռարձակում

2009 թվականի ընթացքում Հանրային հեռուստաընկերության «Հ1» առաջին ալիքի հաղորդումները օրական 18-19.5 ժամ հեռարձակվել են Հայաստանի Հանրապետության տարածքում և 24 ժամ Երևանում և հարակից բնակավայրերում: «Արարատ» մշակութային հեռուստաալիքը օրական 24 ժամ հեռարձակվել է Երևանում, Վանաձորում, Չարենցավանում, Սևանում, Գավառում, Եղեգնաձորում, Ջերմուկում, Ծաղկաձորում և Շիրակի մարզում: Մոտ ապագայում նախատեսվում է ընդլայնել հեռուստաալիքի հեռարձակման գոտին ողջ հանրապետությունում: Արբանյակային հեռարձակմամբ հաղորդումները նույնպես հեռարձակվել են օրական 24 ժամ ծավալով:

Հանրային հեռուստաընկերությունը շարունակել է աշխատանքներ տանել արտասահմանի հայկական մեծ համայնքներ ունեցող բնակավայրերում կաբելային և այլ կապուղիներով Հանրային հեռուստաընկերության հաղորդումները վերահեռարձակելու ուղղությամբ՝ սփյուռքահայ մեր հայրենակիցների համար ավելի մատչելի դարձնելով Հանրային հեռուստաընկերության հաղորդումների դիտումը: Մասնավորապես, հաշվի առնելով ԱՄՆ-ում հայկական մեծ սփյուռքի առկայությունը՝ դեռևս 2008 թվականին «Գլոբ-Քասթ Ֆրանս» բաց բաժնետիրական ընկերության հետ կնքվել է Հանրային հեռուստաընկերության համահայկական հեռուստաալիքի հաղորդումների տարածման համաձայնագիր, որի համաձայն Գլոբ-Քասթը ապահովում է հեռուստաալիքի տարածումը հեռախոսային և կաբելային հեռարձակում իրականացնող ընկերությունների միջոցով, որոնք սպասարկում են ԱՄՆ տարածքի առնվազն 30%-ը: Իսկ Ֆրանսիայում կաբելային ցանցերով Հանրային հեռուստաընկերության հաղորդումները հեռարձակում է ֆրանսիական «Օրանժ» ընկերությունը:

ԱՊՀ երկրներում՝ հատկապես Ռուսաստանում, Ուկրաինայում, Ղազախստանում, Մոլդովայում և Վրաստանում աճել են Հանրային հեռուստաընկերության հաղորդումների կաբելային ցանցով հեռարձակման ծավալները: Մասնավորապես, Հանրային հեռուստաընկերության հաղորդումները կաբելային ցանցով հեռարձակվում են Մոսկվայում, Պերմում, Ուֆայում, Ն. Նովոբորոդում, Վոլգոգրադում, Վոլժսկիում, Տյումենում, Իժևկայում, Եկատերինբուրգում, Կրասնոյարսկում, Օմսկում, Տոլյատիում, Սուրգուտում, ՌԳ՝ Սմոլենսկի և Բելգորոդի մարզերում, Խարկովում, Օդեսայում, Զիչինևում, Ակտաուում, Թբիլիսիում, Բաթումում և մի շարք այլ քաղաքներում:

Ֆինանսատնտեսական գործունեություն

Հանրային հեռուստաընկերությունը 2009 թվականին իր գործունեությունը ապահովել է դրամաշնորհի ձևով պետական բյուջեից ստացված եկամուտների, առևտրային գովազդից և հովանավորությունից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացված եկամուտների հաշվին:

«2009 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Հեռուստատեսային ծառայություններ» ծրագրով Հանրային հեռուստաընկերության համար նախատեսվել էր 2708761.1 հազ. դրամ գումար, այդ թվում՝ ընթացիկ դրամաշնորհ՝ 2630668.4 հազ. դրամ և կապիտալ դրամաշնորհ՝ 78092.7 հազ. դրամ: Սակայն ՀՀ կառավարության 2009 թվականի մարտի 26-ի N 302-Ն որոշման համաձայն ընկերության ընթացիկ դրամաշնորհի գումարը կասեցվել է 298961.6 հազ. դրամով, իսկ կապիտալ դրամաշնորհի գումարը՝ 61712.7 հազ. դրամով:

Ընդհանուր առմամբ, 2009 թվականին ընկերությանը հատկացվել է 2331706.8 հազ. դրամ ընթացիկ դրամաշնորհ և 16380.0 հազ. դրամ կապիտալ դրամաշնորհ: Եկամուտների այլ աղբյուրներից ընկերությունը 2009 թվականին պլանավորել է ստանալ 886000.0 հազ. դրամ եկամուտ և չնայած ֆինանսատնտեսական ճգնաժամին, ընկերությունը կարողացել է գրեթե ամբողջ ծավալով ապահովել այդ եկամուտները: Տարվա արդյունքներով ընկերությունը ստացել է 872410.9 հազ. դրամ եկամուտ: Բացի այդ, Հանրային հեռուստաընկերության համար կարևոր նշանակություն ունեցավ 2009 թվականի դեկտեմբերին «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ի հետ կնքված հովանավորության պայմանագիրը, որի շրջանակներում «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ն 750000.0 դրամով կաջակցի 2010, 2011 և 2012 թվականներին Հանրային հեռուստաընկերության եթերում միջազգային խոշոր սպորտային միջոցառումների հեռարձակմանը:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Հանրային հեռուստաընկերության կողմից 2009 թվականին ստացված եկամուտներն՝ ըստ եկամուտների ստացման առանձին աղբյուրների:

N	Եկամտի աղբյուրը	Գումարը (հազ. դրամ)
1	Դրամաշնորհ	2,331,706.8
2	Առևտրային գովազդ	536,000.0
3	Վճարովի եթերաժամանակ	12,626.7
4	Հովանավորություն	40,908.5
5	Սեփական արտադրության տեսաշարային, ձայնաշարային և տեսաձայնաշարային նյութերի վաճառք	103,043.2
6	Հիմնադիրների ներդրումներ և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացված ֆինանսական միջոցներ	16380.0
7	Այլ եկամուտներ	179,832.5
Ընդամենը		3,220,797.7

Աղյուսակի այլ եկամուտներ տողում ներառված է նաև ակտիվներին վերաբերվող շնորհներից ստացված եկամուտները (106855.6 հազ. դրամ):

2009 թվականին ընկերությունը պետական բյուջեից և այլ աղբյուրներից ստացված եկամուտները ուղղել է «Հ1» առաջին ալիքի, «Արարատ» մշակութային հեռուստաալիքի և «Հ1» միջազգային ծրագրի հաղորդումների արտադրությանն ու հեռարձակմանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Հանրային հեռուստաընկերության 2009 թվականի գործունեության ընթացքում կատարված ծախսերը՝ ըստ հիմնական ծախսային ուղղությունների.

N	Ծախսային ուղղությունները	Գումարը (հազ. դրամ)
1	Աշխատավարձ և Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	1,122,777.5
2	Արտադրական ծախսեր	1,174,069.9
3	Չեռարձակման ծախսեր	655,617.9
4	Այլ ծախսեր	234,985.5
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	3,187,450.8

Աղյուսակի այլ ծախսեր տողում ներառված է նաև արտարժույթի փոխարժեքի աճով պայմանավորված փոխարժեքային ծախսերը (53000.0 հազ. դրամ):

Տարեկան գործունեության արդյունքներով ընկերությունը ստացել է 2279.0 հազ. դրամ գուտ շահույթ, իսկ 2009 թվականի գործունեության ընթացքում հարկերի և տուրքերի ձևով պետական բյուջե է վճարել 343148.4 հազ. դրամ գումար:

2009 թվականին Հանրային հեռուստաընկերությունը, շարունակելով տեխնիկական վերազինումը, ավարտին հասցրեց եթերի ավտոմատացման գործընթացը: Տարվա կեսին շահագործման հանձնվեց նոր կենտրոնական սարքասրահը, որը հնարավորություն ընձեռեց անալոգային համակարգը փոխարինել թվանշային համակարգով, տեսագրման և նկարահանման բոլոր սարքասրահները ընդգրկել մեկ միասնական ցանցում և խուսափել կոմուտացիայի ընթացքում տեսաազդանշանի որակի կորստից:

«Հայտուր» լրատվականի ծրագրի գործունեությունն առավել արդյունավետ կազմակերպելու համար պետական բյուջեից հատկացված 16380.0 հազ. դրամ դրամաշնորհով ձեռք է բերվել չորս մարդատար ավտոմեքենա: Պետական դրամաշնորհից բացի, ընկերությունը տեխնիկական միջոցների և այլ հիմնական միջոցների ձեռքբերմանն է ուղղել 95800.0 հազ. դրամ գումար:

5. «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ

«Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը իրականացնում է Հանրային հեռուստառադիոընկերության ռադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման գործունեությունը: Ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման աշխատանքների համար «2009 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ

օրենքի «Ռադիո ծառայություններ» ծրագրով Հանրային ռադիոընկերությանը «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով նախատեսվել է հատկացնել 735756.1 հազ. դրամ, իսկ «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով՝ 10000.0 հազ. դրամ: Սակայն ՀՀ կառավարության 2009 թվականի մարտի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի N 1573-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորությունների ստանձնման գործընթացը կանոնակարգելու և մի շարք այլ հարցերի մասին» N 302-Ն որոշման համաձայն փոփոխություններ են կատարվել ՀՀ 2009 թվականի պետական բյուջեում, որին համապատասխան 08.03.01.03 «Ռադիո ծառայություններ» ծրագրի «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով նախատեսված հատկացումներից կասեցվել է 84057.3 հազ. դրամ, իսկ «Կապիտալ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով նախատեսված հատկացումներից կասեցվել է 10000.0 հազ. դրամ: Բյուջետային հատկացումների վերոնշյալ կասեցմամբ պայմանավորված՝ 2009 թվականի ապրիլի 1-ից որոշակիորեն կրճատվել է ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման ծավալները:

Ընդհանուր առմամբ «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով 2009 թվականին ընկերությանը հատկացվել է 651698.8 հազ. դրամ:

Ռադիոհաղորդումների պատրաստում

2009 թվականին Հանրային ռադիոընկերությունը պատրաստել է օրական 24 ժամ հաղորդումներ «Առաջին ծրագրի», 21.9 ժամ «Ռադիո Երևանի» և 24 ժամ «Ռադիո Ջազի» համար: Արտասահմանում հեռարձակման համար պատրաստվել է օրական 5 ժամ հաղորդումներ:

Հանրային ռադիոընկերության գործունեությունը 2009 թվականին նույնպես նպատակաուղղված էր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների և պարտավորությունների իրականացմանը: Մարդու սահմանադրական իրավունքն ապահովելու նպատակով Հանրային ռադիոընկերությունը նույնպես իր գործունեության հիմքում դրել է տեղեկատվական, քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, մանկապատանեկան, գիտական, հայոց լեզվի և պատմության, մարզական, ժամանցային և հանրության համար կարևոր ու նշանակալից այլ տեղեկատվական բնույթի բազմազան հաղորդումների արտադրությունն ու հեռարձակումը:

Նախապատվություն տալով սեփական արտադրության հաղորդումներին՝ Հանրային ռադիոընկերությունը ընդլայնել է իր ունկնդիրների շրջանակը՝ ձգտելով բավարարել

սոցիալական լայն շերտերի, տարբեր տարիքային խմբերի ու ազգային փոքրամասնությունների նախասիրությունները: Հանդիսանալով տեղեկատվական, քարոզչական, քաղաքական, մշակութային, լեզվական և արժեքային բարդ ու տարողունակ ինստիտուտ՝ Հանրային ռադիոընկերությունը միշտ փորձում է լինել իր ճիշտ դերում և ծառայել հասարակությանը՝ ղեկավարվելով օբյեկտիվության, ժողովրդավարության, անկողմնակալության, բազմազանության և բազմակարծության սկզբունքներով:

Այս խնդիրների իրականացումը պահանջում է սկզբունքային առավել ճկուն մեխանիզմների և մոտեցումների կիրառություն, որոնք բխում են հանրության տեղակատվական կայանը դառնալու հրամայականից և համահունչ են մեր ազգային ու պետական շահերին:

2009 թվականի ընթացքում Հանրային ռադիոընկերությունը պատրաստել է 25509.8 ժամ ռադիոհաղորդումներ: Հաղորդումներն ըստ թեմատիկ ուղղությունների պատրաստվել են հետևյալ ծավալներով.

N	Հաղորդումների թեմատիկ ուղղվածությունը	Հաղորդումների պատրաստման ծավալը (ժամ)
1	Լրատվական վերլուծական	1670.8
2	Սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական հաղորդումներ	116.9
3	Մշակութային հաղորդումներ	866.0
4	Երիտասարդական, ուսումնական հաղորդումներ	808.3
5	Մանկապատանեկան հաղորդումներ	569
6	Զվարճալի, ժամանցային հաղորդումներ	926.6
7	Հոգևոր հաղորդումներ	243.1
8	Երաժշտական	3559.3
9	Ռ-ադիո Երևան	6339.5
10	«Ջազ ռադիո»	8760.0
11	Արտասահմանի համար տրվող հաղորդումներ	1102.8
12	Ինտերնետային էջի համար պատրաստվող հաղորդումներ	547.5

Ռ-ադիոհաղորդումների մեջ լրատվական և տեղեկատվական հաղորդումները կազմել են ռադիոէթերի զգալի ծավալը, որոնք անդրադարձել են քաղաքական, տեղական-լրատվական, հասարակական-քաղաքական, մարզական և այլ բնույթի իրադարձություններին: «Ռ-ադիոլուր» ծրագրի միջոցով լրատվությունը ներկայացվել է յուրաքանչյուր ժամագլխին 5-15 րոպե տևողությամբ, իսկ հիմնական թողարկումը (60 րոպե տևողությամբ) ներառել է օրվա ամբողջ լրահոսը և օրվա կարևորագույն թեմաների վերաբերյալ վերլուծական նյութեր ու հարցազրույցներ: Ընդգրկում է նաև լրատվության աշխարհագրական սահմանները՝ Լեռնային Ղարաբաղ, Ջավախք, սփյուռք, հանրապետության մարզեր, միջազգային անցուղարձ և այլն: Զննարկվել են բազմաբնույթ հասարակական հնչեղություն ունեցող հարցեր, հասարակությունը իրազեկվել է պետության կողմից վարվող քաղաքականության, տարբեր ոլորտներում իրականացվող և իրականացվելիք քայլերի մասին: Լուսաբանվել են ՀՀ պետական և

կառավարական բոլոր պաշտոնական հանդիպումները, պաշտոնական հաղորդագրությունները, տնտեսական և քաղաքական այլ իրադարձություններ: Այլ կերպ՝ «Ռադիոլուրը» եթեր է հեռարձակում կարծիքների բազմազանության ամբողջական պատկերը: Օրվա լրահոսը տեղադրվում է նաև ընկերության www.armradio.am կայք էջում:

Սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական ուղղվածությամբ հաղորդումներն անդրադարձել են հասարակական հնչեղություն ունեցող խնդիրներին, ներքաղաքական իրադարձություններին: Հանրային ռադիոյի քաղաքական եթերը առանձնացել է իր հավասարակշռվածությամբ: Այստեղ հյուրընկալվել են թե՛ իշխանական, թե՛ ընդդիմադիր գործիչներ՝ քննարկելու քաղաքական գործընթացներին առնչվող հրատապ հարցեր՝ միաժամանակ պահպանելով կարծիքների և տեսակետների բազմազանություն ու հավասարակշռություն («Բաց նախագիծ», «Իրազեկում»): Պետական և քաղաքական նշանակության ոչ մի իրադարձություն դուրս չի մնացել Հանրային ռադիոընկերության քաղաքական ծրագրերի տեսադաշտից: Հարկ է նշել, որ 2009 թվականին Հանրային ռադիոյի եթերում առավել մեծ ուշադրություն է դարձվել ՀՀ կառավարության, Ազգային Ժողովի գործունեությունների, ինչպես նաև հասարակական ոլորտին վերաբերվող առավել ուշագրավ իրադարձությունների համակողմանի լուսաբանմանը:

2009 թվականի Երևանի ավագանու ընտրությունների նախընտրական քարոզչության ժամանակահատվածում Հանրային ռադիոընկերությունը վճարովի և անվճար եթերաժամանակ է տրամադրել թեկնածու գրանցված կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին (280.1 րոպե անվճար և 15 րոպե վճարովի): Միաժամանակ Հանրային ռադիոընկերությունը իր լրատվական վերլուծական ծրագրերում հավասարակշռված և անկողմնակալ պայմաններով լուսաբանել է թեկնածուների նախընտրական քարոզարշավը:

Հանրային ռադիոյի մշակութային հաղորդումները անդրադարձել են մշակույթին և մշակութային գործիչների կյանքին ու գործունեությանը: Ժամանակակից տեղեկատվական ոլորտի արագ զարգացման պայմաններում անհրաժեշտություն է առաջանում վերանայել ռադիոեթերում մշակույթը արտացոլելու ավանդական մեթոդները և որոնել ու գտնել առավել ինքնատիպ արտահայտվելու շահեկան ձևեր:

«Վերնատուն» հաղորդման շրջանակներում անվանի և տաղանդավոր արվեստագետների հետ ուղիղ եթերում կազմակերպվել են հանրապետության մշակութային անցուդարձին վերաբերող անկեղծ ու հետաքրքիր զրույցներ՝ հասարակությանը հուզող բարոյական խնդիրների, մշակութային համակարգը օրենսդրորեն և գործնականում աշխուժանցնելու ռազմավարության, ինչպես նաև մշակութային համակարգում առկա այլ կարևոր հիմնախնդիրների մասին: Հանրապետության մարզերում և քաղաքներում տեղի ունեցող մշակութային անցուդարձերի հետ միասին լուսաբանվել են նաև համաշխարհային մշակույթի նորությունները:

«Կուլիսներ» հաղորդման ընթացքում ներկայացվել է թատրոնների անցուղարձը, առօրյան, խնդիրներն ու հաջողություններն, իսկ «Մեկ դերասանի թատրոն» հաղորդումը Հանրային ռադիոյի ձայնադարանում առկա արժեքները հաջողությամբ ու նորովի մատուցել է ռադիոսարանին:

Ռեդիոունկնդիրների շրջանում մեծ հետաքրքրություն է առաջացրել նաև «Թղթապանակ N» հաղորդաշարը, որի հեղինակը փորձել է պետական արխիվի նյութերի հիման վրա ներկայացնել մեր պատմության առավել քիչ լուսաբանված էջերը, բացահայտել հանրահայտի անհայտ կողմերը: «Հայաստանը մեր տունն է» հաղորդման շրջանակներում պարբերաբար անդրադարձ է կատարվում Հայաստանում ապրող ազգային փոքրամասնությունների մշակութային կյանքին և նվիրված է նրանց մշակույթի, ավանդույթների ներկայացմանն ու պահպանմանը:

Հանրային ռադիոընկերության եթերում իրենց ուրույն տեղն ունեն երաժշտական հաղորդումները: Երաժշտական ծրագրերի խմբագրությունը ռադիոունկնդիրն է մատուցել հայկական, ժողովրդական, գուսանական, դասական, հին և ժամանակակից բազմաժանր ու բազմաժանր երաժշտական ստեղծագործություններ: Հանրային ռադիոընկերության եթերը առավելապես կողմնորոշված է դեպի ազգային, հայկական դասական և ժամանակակից երաժշտությունը: Հաղորդացանցի ամբողջական նկարագիրը առավել հայեցի դարձնելու համար նույնիսկ այլ թեմաներով հաղորդումների ձևավորումներում ևս նախապատվությունը տրվել է հայկական մեղեդիներին:

Հանրային ռադիոյի եթերում շարունակվել է հեռարձակվել «Արմատներ» հաղորդաշարը, որը ներկայացրել է ժողովրդական, գուսանական, ազգագրական, ինչպես նաև հայ մեծանուն կոմպոզիտորների ստեղծագործությունները՝ նպատակ ունենալով ազգաբնակչության մեջ վերականգնել մեր ժողովրդի երաժշտական կենցաղում տարածում գտած մեր տաղերգուների և գուսանների երգերն ու տաղերը: Ներկայացվել են հայ ազգային երգարվեստի տարբեր շերտեր՝ սկսած հնագույն ժողովրդական երգերից մինչև մեր օրերում ստեղծագործող աշուղներ՝ երաժշտական կատարումները սերտորեն զուգակցելով երաժշտության պատմության հարցերի պարզաբանման և ուսումնասիրության հետ: Ի դեպ, 2009 թվականին Վահան Թեքեյան մրցանակաբաշխության ռադիո և հեռուստատեսություն անվանակարգում հաղթող է ճանաչվել «Արմատներ» հաղորդումը:

Հեռարձակվել են «Հակակշիռ» և «Էտյուդներ» երաժշտական հաղորդաշարերը: «Էտյուդներ»-ը նվիրված է անվանի երաժիշտների կյանքին ու գործունեությանը, իսկ «Հակակշիռ» հաղորդաշարի ընթացքում մտավորականների, կոմպոզիտորների, երիտասարդ երգիչների և բնագավառի խնդիրներով մտահոգվող մասնագետների մասնակցությամբ ուղիղ եթերում կազմակերպվում են ժամանակակից երաժշտական մշակույթի կարևոր հիմնահարցերի վերաբերյալ քննարկումներ:

2009 թվականին վերականգնվեցին Հանրային ռադիոընկերության էստրադային սիմֆոնիկ նվագախումբը, Արամ Մերանգուլյանի անվան ժողովրդական գործիքների անսամբլը և Արևիկ մանկապատանեկան անսամբլը, ընդ որում՝ նշված երեք երաժշտական կոլեկտիվներն էլ տարեվերջին հանդես եկան նոր համերգային ծրագրերով:

Երիտասարդական հաղորդումները տարվա ընթացքում անդրադարձել են երիտասարդությանը հուզող հիմնախնդիրներին, տեղի են ունեցել դրանց վերաբերյալ քննարկումներ: Զգալի տեղ է հատկացվել կրթական և ուսումնական, հանրամատչելի և զվարճալի, հայրենասիրական և գիտակրթական, էսթետիկական և դաստիարակչական թեմաներին:

Հանրային ռադիոյի «Լյունսե» ծրագիրը եթերում է եղել ամեն օր: Հերոսները երիտասարդներ են՝ իրենց տարաբնույթ խնդիրներով և հետաքրքրություններով. անդրադարձ է կատարվել կրթական, բնապահպանական, սոցիալական, մշակութային ու սպորտային ոլորտներին: Ցանկացած երևույթ, խնդիր, միջոցառում, ակցիա կամ հանդիպում ներկայացվել է երիտասարդի տեսանկյունից և փորձ է կատարվել գտնելու այն կարևոր ու ճշմարիտ ասելիքը, որը կօգնի երիտասարդությանը: Ծրագիրը համագործակցել է Հայաստանի տարբեր շրջանների երիտասարդական կազմակերպությունների, ակումբների հետ՝ ռադիոունկնդիրներին ապահովելով վերջիններիս մասին տեղեկատվությամբ, ինչպես նաև մշտապես լուսաբանել է միջազգային կրթական ծրագրերը: 2009 թվականին «Լյունսե» երիտասարդական ծրագիրը միջմշակութային հարաբերությունների խթանման, քաղաքացիական հասարակության երիտասարդական նախաձեռնություններին անդրադառնալու և բնապահպանական խնդիրներին և ծրագրերին ակտիվորեն մասնակցելու համար Բրիտանական խորհրդի, ՄԱԿ-ի հայկական ասոցիացիայի և FPWC Հ.Հ. Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից արժանացել է Շնորհակալագրերի:

Երիտասարդական ծրագրերում իրենց ուրույն տեղն ունեն նաև ինտելեկտուալ խաղ-վիկտորինաները («Խելք խելքի»), կլոր սեղանները՝ երիտասարդությանը վերաբերող հրատապ հարցերի քննարկմամբ («Եռացող թեյնիկ»): Իսկ «Մարզական խաչմերուկ» հաղորդումների ընթացքում անդրադարձել է կատարվել հայկական սպորտի նվաճումներին, խոսվել թերությունների և բացթողումների մասին՝ փորձելով նպաստել դրանց շտկման գործին: Մանկապատանեկան ծրագրեր

Մանկապատանեկան հաղորդումները (Զարթուցիչ, Հարի Փոթերի ակումբ, Կար-չկար, Պատիկաշեն) Հանրային ռադիոյի եթերում հեռարձակվում են ամեն օր՝ 60 րոպե ընդհանուր տևողությամբ: Հաղորդումներն ունեն տարբեր ձևաչափեր և ուղղված են տարբեր տարիքային խմբերին: Հաղորդումներում երեխաներին տրվում է անհրաժեշտ տեղեկատվություն, անդրադառնում են նրանց հուզող և պատանեկան տարիքին բնորոշ խնդիրներին՝ փորձելով լրացնել գիտելիքի այն պաշարը, որն անհրաժեշտ է նրանց ժամանակին համընթաց քայլելու համար: Խմբագրությունը համագործակցում է պատանի լրագրողների և հաղորդավարների հետ

և, ըստ էության, դարձել է ապագա ռադիոլրագրողների իսկական դպրոց: Երեխաների կրթադաստիարակչական և տեղեկատվական պահանջմունքների ամբողջական բավարարման համար անհրաժեշտ է մանկապատանեկան լսարանին գրավիչ տարբերակներով ու մոտեցումներով ներկայանալու հմտություններ և եթերային հաղորդակցության նոր ձևերի շարունակական կատարելագործում:

Մանկապատանեկան ծրագրերում առանձնանում է «Լյա-լյա-ֆա» մանկապատանեկան երգի հիթ շքերթը, որը հնարավորություն է ընձեռում ներկայանալ երեխաների համար ստեղծագործող կոմպոզիտորներին, մանուկ ու պատանի երգիչներին: Ստեղծագործական խումբը համագործակցում է մայրաքաղաքի և հանրապետության մարզերի մանկական երաժշտախմբերի հետ: Ընտրվող երգերը լինում են միայն հայերեն, իսկ քվեարկությունը կատարվում է www.lalafa.armradio.am կայքում, ինչպես նաև հեռախոսով:

Յուրաքանչյուր կիրակի եթեր է հեռարձակվել մանկական ռադիոթատրոն:

Հանրային ռադիոընկերություն պատրաստել և հեռարձակել է նաև հոգևոր հաղորդումներ՝ համագործակցելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արարատյան թեմի դիվանի հետ: «Ավետիս», «Շողակն Արարատյան» և «Մանանա» հաղորդաշարերի ընթացքում տեղի են ունեցել հանդիպումներ հոգևորականների հետ, որոնք էլ պարբերաբար ներկայացրել են քրիստոնեական տոները, ծիսակարգը, ինչպես նաև պատասխանել են բնակչությանը հուզող շատ հարցերի:

Հանրային ռադիոն բավական մեծ ուշադրություն է դարձնում ռադիոթերթում լեզվի անադարտության պահպանման խնդրին և իր գործունեությամբ, հայերենի նկատմամբ հոգատար և հարգալից վերաբերմունքով ապացուցում է, որ կարելի գրագետ և կիրթ հայերենով եթերում լինել ժամանակակից և հետաքրքիր: Դա հաջողվում է ռադիոյի լեզվական ավանդույթները պահպանելու, ինքնակարգապահության և ճիշտ սերնդափոխություն իրականացնելու շնորհիվ: Այս տեսանկյունից Հանրային ռադիոյի եթերում առանձնանում են «Մենք և մեր բառերը» և «Խոսենք հայերեն» հաղորդումները, որոնք ներկայացնում են հայերեն լեզվի բազմակազմությունը, բառերի արմատների, դարձվածքների, շարահյուսության վերաբերյալ օգտակար տեղեկություններ:

«Երևան» ծրագիրը ամենօրյա հաղորդումների շարք է, որն անդրադարձել է մայրաքաղաքի խնդիրներին, ներկայացրել մայրաքաղաքի համայնքներում կատարված աշխատանքները, արձագանքել է բնակիչների դիտողություններին և առաջարկություններին, ներկայացրել մայրաքաղաքում կառավարման հաջողություններն ու բացթողումները: Հաղորդման ընթացքում, որն ընդգրկում է մայրաքաղաք Երևանին վերաբերող գրեթե բոլոր ոլորտները, կատարվել են լրագրողական հետաքննություններ քաղաքային տնտեսության, տրանսպորտի, սանիտարական ծառայությունների, արտաքին լուսավորության, բնակարանային ֆոնդի պահպանության, քաղաքաշինության, ճարտարապետության, վթարային շենքերի ամրացման, փողոցների նորոգման, բարեկարգման և կանաչապատման աշխատանքների արդյունավետության, բնապահպանական խնդիրների վերաբերյալ:

Արտասահմանի համար տասներեք լեզուներով (ռուսերեն, վրացերեն, պարսկերեն, եզդիերեն, ադրբեջաներեն, թուրքերեն, քրդերեն, ասորերեն, արաբերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն) պատրաստված հաղորդումներում օտարներին և աշխարհասփյուռ հայությանը ներկայացվում է Հայաստանի պատմությունը, ներկա իրադարձությունները, արձածվում են կարևորագույն հարցեր, ինչպիսիք են՝ Ղարաբաղի խնդրի կարգավորումը, Հայ Դատի և ցեղասպանության ճանաչման հարցերը և այլն: Բազմաթիվ սփյուռքահայեր, չտիրապետելով մայրենի լեզվին, հայրենիքից տեղեկատվություն են ստանում այն լեզվով, որին նրանք տիրապետում են, ինչը ևս նպաստում է Հայաստանի և Սփյուռքի միջև կապերի ամրապնդմանը: Արտասահմանի համար տրվող հաղորդումները տեղադրվում են նաև Հանրային ռադիոընկերության միջազգային ինտերնետային կայք էջում՝ www.int.armradio.am հասցեով: Կայքում տեղադրվում են հաղորդումների տեքստային և ձայնային տարբերակները, որը հնարավորություն է տալիս հաղորդումները լսել և կարդալ օրվա ցանկացած ժամին, ինչպես նաև արխիվի միջոցով ծանոթանալ նախորդ օրերի հաղորդումներին: Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդման առումով հատկապես կարևոր նշանակություն ունի «Կամուրջ» Հայաստան-Սփյուռք ամենօրյա ծրագիրը, որի թեմատիկան ընդգրկում է հայության երկու մեծ հատվածների գործնական կապերի ամբողջությունը՝ ներդրումներ, սփյուռքահայ բարերարների գործունեություն հայրենիքում, կրթամշակութային ձեռնարկներ, Հայ Դատի գրասենյակների գործունեության լուսաբանում, սփյուռքահայ ականավոր գործիչների այցելություններ հայրենիք և այլն: Ծրագիրը Համաշխարհային հայկական կոնգրեսի, Ռուսաստանի հայերի միության և Հայաստանի ժողովրդի միության կողմից հայտարարված «Աշխարհի հետ. մեր ինքնությամբ. Հայաստանը համայն հայության հայրենիքն է» մրցանակաբաշխությունում ճանաչվել է դափնեկիր:

Հանրային ռադիոընկերությունը «Ռ-ադիո Ջազ» ծրագրի միջոցով շուրջօրյա հեռարձակում է ապահովում ջազի սիրահարների համար, ներկայացնում է ջազի բոլոր ուղղություններն ու հոսանքները՝ ծրագրերում ընդգրկելով ավանդական և ժամանակակից ջազի, ջազ-ստանդարտների, անցյալի մեծ վարպետների, ժամանակակից հայ և օտարազգի կատարողների լավագույն ձայնագրությունները: Իսկ Հանրային ռադիոյի «Ռ-ադիո Երևան» ծրագիրն իր մեջ ներառում է երաժշտական, ժամանցային, հետաքրքիր ու բազմաժանր ծրագրեր երիտասարդների համար: Ռ-ադիոկայանը հեռարձակվում է Հայաստանի ողջ տարածքում:

Ռ-ադիոհաղորդումների հեռարձակում:

2009 թվականի ընթացքում Հանրային ռադիոընկերության հաղորդումները հեռարձակվել են միջին, կարճ, գերկարճ և FM հաճախականություններով: Հեռարձակման աշխատանքներն իրականացվել են «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲԸ-ի տեխնիկական միջոցներով, «Ռ-ադիո» ՓԲԸ-ի, «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի և «ԱՐ ռադիո միջմայրցամաքային» ՍՊԸ-ի կողմից՝ ըստ սահմանված որակական և տեխնիկական չափանիշների:

Հանրային ռադիոընկերության հաղորդումները եթեր են հեռարձակվել նաև ինտերնետային կայքի միջոցով, որտեղ տեղադրվել է ամենժամյա լուրերի էլեկտրոնային տարբերակը հայերենով և անգլերենով: Հեռարձակման աշխատանքները կատարվել են ամբողջ ծավալով՝ պահպանելով ծրագրերի արտադրության և հեռարձակման չափանիշներն ու ստանդարտները:

Ֆինանսատնտեսական գործունեություն:

Հանրային ռադիոընկերությունը 2009 թվականին իր գործունեությունը ապահովել է դրամաշնորհի ձևով պետական բյուջեից ստացված եկամուտների, առևտրային գովազդից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացված եկամուտների հաշվին:

«2009 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Ռադիո ծառայություններ» ծրագրով Հանրային հեռուստաընկերության համար նախատեսվել էր 745756.1 հազ. դրամ գումար, այդ թվում՝ ընթացիկ դրամաշնորհ՝ 735756.1 հազ. դրամ և կապիտալ դրամաշնորհ՝ 10000.0 հազ. դրամ: Սակայն ՀՀ կառավարության 2009 թվականի մարտի 26-ի N 302-Ն որոշման համաձայն ընկերության ընթացիկ դրամաշնորհի գումարը կասեցվել է 84057.3 հազ. դրամով, իսկ կապիտալ դրամաշնորհի գումարը կասեցվել է ամբողջությամբ:

Ընդհանուր առմամբ, 2009 թվականին ընկերությանը հատկացվել է 651698.8 հազ. դրամ ընթացիկ դրամաշնորհ: Եկամուտների այլ աղբյուրներից ընկերությունը 2009 թվականին պլանավորել է ստանալ 42157.0 հազ. դրամ եկամուտ, սակայն հավաքագրված եկամուտները կազմել են 128357.4 հազ. դրամ, որից 76043.7 հազ. դրամը ակտիվներին վերաբերվող շնորհներից ստացված եկամուտներն են: Ակտիվներին վերաբերվող շնորհների գերակշիռ մասը անհատույց ստացված հողի գծով շնորհն է:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Հանրային ռադիոընկերության կողմից 2009 թվականին ստացված եկամուտներն՝ ըստ եկամուտների ստացման առանձին աղբյուրների:

N	Եկամտի տեսակները	Գումարը (հազ. դրամ)
1	Դրամաշնորհ	651,698.8
2	Առևտրային գովազդ	12,103.2
3	Վճարովի եթերաժամանակ	250.4
4	Սեփական արտադրության տեսաշարային, ձայնաշարային և տեսաձայնաշարային նյութերի վաճառք	5,041.6
5	Այլ եկամուտներ	110903.4
Ընդամենը		779997.4

Ակտիվներին վերաբերվող շնորհներից ստացված եկամուտները (76043.7 հազ. դրամ) ներառվել է աղյուսակի այլ եկամուտներ տողում:

2009 թվականին Հանրային ռադիոընկերությունը պետական բյուջեից և այլ աղբյուրներից ստացված եկամուտներն ուղղել է «Առաջին ծրագիր», «Ռադիո Երևան», «Ռադիո Ջազ»

ռադիոժրագրերի, ինչպես նաև արտասահմանում հեռարձակման համար պատրաստվող հաղորդումների արտադրությանն ու հեռարձակմանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Հանրային ռադիոընկերության 2009 թվականի գործունեության ընթացքում կատարված ծախսերը՝ ըստ հիմնական ծախսային ուղղությունների.

N	Ծախսային ուղղությունները	Գումարը (հազ. դրամ)
1	Աշխատավարձ և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	360,981.3
2	Արտադրական ծախսեր	159,259.8
3	Հեռարձակման ծախսեր	189,054.9
4	Այլ ծախսեր	27,242.8
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	736,538.7

Տարեկան գործունեության արդյունքներով ընկերությունը ստացել է 34860.5 հազ. դրամ գուտ շահույթ, իսկ 2009 թվականի գործունեության ընթացքում հարկերի և տուրքերի ձևով պետական բյուջե է վճարել 59260.0 հազ. դրամ գումար:

Հանրային ռադիոընկերությունը 2009 թվականին տեխնիկական և այլ հիմնական միջոցների ձեռքբերմանն է ուղղել 12718.0 հազ. դրամ գումար:

6. «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ

Հանրային հեռուստառադիոընկերությունը Շիրակի մարզում հեռուստահաղորդումների արտադրության և հեռարձակման գործունեություն է իրականացնում «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ի միջոցով: Օրական 8 ժամ հեռուստահաղորդումների և 24 ժամ ռադիոհաղորդումների պատրաստման և հեռարձակման աշխատանքների համար «2009 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Ռադիո և հեռուստատեսային ծառայություններ» ծրագրով ընկերությանը «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով նախատեսվել է հատկացնել 23175.0 հազ. դրամ: Սակայն ՀՀ կառավարության 2009 թվականի մարտի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի N 1573-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորությունների ստանձնման գործընթացը կանոնակարգելու և մի շարք այլ հարցերի մասին» N 302-Ն որոշման համաձայն փոփոխություններ են կատարվել ՀՀ 2009 թվականի պետական բյուջեում, որին համապատասխան 08.03.01.04 «Ռադիո և հեռուստատեսային ծառայություններ» ծրագրի «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով նախատեսված հատկացումներից կասեցվել է 213.1 հազ. դրամ:

Ընդհանուր առմամբ «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով 2009 թվականին ընկերությանը հատկացվել է 22961.9 հազ. դրամ, որից 20011.3 հազ. դրամը՝ հեռուստառադիոհաղորդումների պատրաստման, իսկ 2950.6 հազ. դրամը՝ հեռարձակման ծախսերի կատարման համար:

«Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ի հեռուստահաղորդումների հեռարձակումն իրականացվել է Շիրակի մարզի տարածքում դեցիմետրային տիրույթի 39-րդ կապուղով և Ամասիայում՝ 41-րդ դեցիմետրային կապուղով (օրական 8 ժամ), իսկ ռադիոհաղորդումների հեռարձակումը իրականացվել է FM տիրույթում՝ 102.5 ՄՀց հաճախականությամբ (օրական 24 ժամ):

Հեռուստառադիոհաղորդումների պատրաստման ընթացքում «Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ն առաջնորդվել է Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի կողմից ընդունված նպատակային ծրագրերով: 2009 թվականին ընկերությունը պատրաստել և հեռարձակել է հեռուստառադիոհաղորդումներ՝ հետևյալ թեմատիկ ուղղություններով և ծավալներով.

N	Հաղորդման թեմատիկ ուղղվածությունը	Հեռուստահաղորդումների պատրաստման ծավալը հաշվետու ժամանակաշրջանում /ժամ/	Ռադիոհաղորդումների պատրաստման ծավալը հաշվետու ժամանակաշրջանում /ժամ/
1	Լրատվական, լրատվական-վերլուծական	112.2	317.6
2	Քաղաքական, տնտեսական, հասարակական	107.3	7.0
3	Մշակութային	28.2	51.5
4	Մարզական	16.8	397.9
5	Երաժշտական, Ժամանցային	2327.6	6692.0
6	Այլ	327.9	1294.0
	Ընդամենը	2920.0	8760.0

Լրատվական, լրատվական վերլուծական հեռուստահաղորդումներից հեռարձակվել է «Օրագիծ» ամենօրյա լրատվական ծրագիրը (1 ժամվա պարբերականությամբ), որն անդրադարձել է քաղաքական, տեղական-լրատվական, հասարակական և այլ բնույթի իրադարձություններին: Իսկ «Հետագիծ» լրատվական-վերլուծական ծրագիր (շաբաթը մեկ անգամ պարբերականությամբ) ներկայացրել է ամբողջ շաբաթվա ընթացքում տեղի ունեցած կարևորագույն քաղաքական, սոցիալ-տնտեսական, միջազգային և մարզական իրադարձությունները:

Քաղաքական, տնտեսական և հասարակական ուղղվածություն ունեցող հաղորդումներից հեռուստադիտողին են ներկայացվել «Փակագիծ» և «Ստորակետ» հաղորդաշարերը, որոնց

շրջանակներում հրավիրված մասնագետների հետ քննարկվել են հանրությանը հուզող տարաբնույթ հարցեր ու հիմնախնդիրներ և տրվել են համապատասխան գնահատականներ:

Մշակութային հեռուստահաղորդումներից հեռարձակվել են «Ես և դու» և «Դեպի տաճար» հաղորդումները: «Ես և դու» հաղորդաշարը ներկայացրել է ժամանակակից մշակութային գործիչների, արվեստագետների ստեղծագործությունները՝ նրանց դարձնելով հանրությանն ավելի հայտնի: «Դեպի տաճար» հոգևոր-կրթական հաղորդման շրջանակներում ներկայացվել են Հայ Առաքելական եկեղեցու տոները, ծեսերն ու ավանդույթները:

Մարզական հաղորդումներից հեռուստադիտողին է ներկայացվել «Շիրակ աշխարհի սպորտ»-ը, որն անդրադառնում է մարզում և հանրապետության տարածքում տեղի ունեցած կարևորագույն մարզական իրադարձություններին:

Շիրակի հանրային հեռուստառադիոյի եթերում տեղ են գտել նաև գեղարվեստական ֆիլմեր, հեռուստատեսային սերիալներ, փաստագրական ֆիլմեր և մուլտֆիլմեր:

Շիրակի հանրային հեռուստառադիոն ռադիոունկնդիրներին է ներկայացել մի շարք ռադիոհաղորդաշարերով՝ «Օրագիծ», «Հետագիծ», «Անդրադարձ», «Դեպի տաճար», «Չէիք սպասում», «Երաժշտական խճանկար», «Քեզ համար» և այլն:

Ֆինանսատնտեսական գործունեություն

«Շիրակի հանրային հեռուստառադիո» ՓԲԸ-ն 2009 թվականին իր գործունեությունը ապահովել է դրամաշնորհի ձևով պետական բյուջեից ստացված եկամուտների, առևտրային գովազդից, հովանավորությունից և օրենքով չարգելված այլ աղբյուրներից ստացված եկամուտների հաշվին:

«2009 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Ռադիո և հեռուստատեսային ծառայություններ» ծրագրով ընկերության համար նախատեսվել էր ընթացիկ դրամաշնորհ՝ 23175.0 հազ. դրամ: Ի տարբերություն Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության, Շիրակի հանրային հեռուստառադիոյի համար պետական բյուջեով նախատեսված հատկացումները էականորեն չեն կրճատվել (213.1 հազ. դրամ) և ընդհանուր առմամբ, 2009 թվականին ընկերությանը հատկացվել է 22961.9 հազ. դրամ ընթացիկ դրամաշնորհ: Եկամուտների այլ աղբյուրներից ընկերությունը 2009 թվականին պլանավորել է ստանալ 10700.0 հազ. դրամ եկամուտ, սակայն ստացված եկամուտները կազմել են 9762.0 հազ. դրամ:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Շիրակի հանրային հեռուստառադիոյի կողմից 2009 թվականին ստացված եկամուտներն՝ ըստ եկամուտների ստացման առանձին աղբյուրների:

N	Եկամտի աղբյուրը	Գումարը (հազ. դրամ)
1	Դրամաշնորհ	22961.9
2	Առևտրային գովազդ	496.0
3	Վճարովի եթերաժամանակ	2071.0
4	Հովանավորություն	600.0
5	Սեփական արտադրության տեսաշարային, ձայնաշարային և տեսաձայնաշարային նյութերի վաճառք	915.0
6	Այլ եկամուտներ	5680.0
ԸՆԴԱՄԵՆԸ		32723.9

2009 թվականին Շիրակի հանրային հեռուստառադիոն պետական բյուջեից և այլ աղբյուրներից ստացված եկամուտներն ուղղել է հեռուստահաղորդումների և ռադիոհաղորդումների արտադրությանն ու հեռարձակմանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Շիրակի հանրային հեռուստառադիոյի 2009 թվականի գործունեության ընթացքում կատարված ծախսերը՝ ըստ հիմնական ծախսային ուղղությունների.

N	Ծախսային ուղղությունները	Գումարը (հազ. դրամ)
1	Աշխատավարձ և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	20813.6
2	Արտադրական ծախսեր	5257.0
3	Հեռարձակման ծախսեր	3171.3
4	Այլ ծախսեր	1445.2
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ		30687.1

Տարեկան գործունեության արդյունքներով ընկերությունը ստացել է 1381.8 հազ. դրամ զուտ շահույթ:

7. «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ

Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը հասարակական կարծիքի ուսումնասիրման աշխատանքներն իրականացնում է «Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ի միջոցով: Կենտրոնի հիմնական նպատակն է ուսումնասիրել Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոյի եթերում հեռարձակվող հաղորդումների և հաղորդաշարերի վերաբերյալ հանրության կարծիքը:

«2009 թվականի ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի «Հասարակական կարծիքի ուսումնասիրման ծառայություններ» ծրագրով ընկերությանը «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով նախատեսվել է հատկացնել 10642.0 հազ. դրամ: Սակայն ՀՀ կառավարության 2009 թվականի մարտի 26-ի

«Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի N 1573-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորությունների ստանձնման գործընթացը կանոնակարգելու և մի շարք այլ հարցերի մասին» N 302-Ն որոշման համաձայն փոփոխություններ են կատարվել ՀՀ 2009 թվականի պետական բյուջեում, որին համապատասխան 08.03.01.06 «Հասարակական կարծիքի ուսումնասիրման ծառայություններ» ծրագրի «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով նախատեսված հատկացումներից կասեցվել է 2642.0 հազ. դրամ:

Ընդհանուր առմամբ «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքների առևտրային կազմակերպություններին» հոդվածով 2009 թվականին ընկերությանը հատկացվել է 8000.0 հազ. դրամ:

«Հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն» ՓԲԸ-ն 2009 թվականին անց է կացրել չորս սոցիոլոգիական հետազոտություն, ընդգրկվել են 2400 ռեսպոնդենտներ Երևան քաղաքի բոլոր համայնքներից, ինչպես նաև անցկացվել է փորձագիտական 12 հետազոտություններ 1267 փորձագետների մասնակցությամբ, որոնք վերաբերվել են հետևյալ հիմնական թեմաներին՝ տնտեսություն, սպորտ, հեռուստատեսություն, ռադիոկայաններ և էլեկտրոնային մամուլ, տպագիր մամուլ, առողջապահություն և ՋԼՄ փոխհարաբերություններ, ինչպես նաև ՋԼՄ-ների վերաբերյալ իրենց տեսակետներն ու կարծիքներն են ներկայացրել մշակույթի, կրթության, գիտության բնագավառի, հասարակական կազմակերպությունների և հասարակական-քաղաքական կուսակցությունների, երիտասարդության ու ուսանողության ներկայացուցիչները:

Վերոնշյալ հետազոտությունների և հարցումների արդյունքները նպաստել են Հանրային հեռուստաընկերության և Հանրային ռադիոընկերության ծրագրերի կառուցվածքում անհրաժեշտ փոփոխությունների կատարմանը, ինչպես նաև ծրագրերի կազմման գործընթացին հանրության մասնակցության ապահովմանը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՄՏԱՌ-ԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ